



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

Hay
zhoghovardak...
diwts'aznakan
vēpē

Bagrat
Khalat'eants'

**Hay
zhoghovdak...
diwts‘aznakan
vēpě**

**Hay
zhoghovardak...
diwts‘aznakan
vēpě**

ՀԵՅ ՔԱՂԱՔԻ ՊՈԽՈՎՆ ԳԻՒՑԱՉԵՐՈՎՆ ՎԵՐ

ԱՀԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴՐԱՆ

Խ Ա Յ ։

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԳԻՒՑԱՉՆԱԿԱՆ ՎԵՊԸ



ՎԻԵՆԱ

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1903.

Հ Յ Հ Յ Ո Վ Ր Ա Վ Ա Կ Ա Ն
Հ Յ Ո Վ Ր Ա Վ Ա Կ Ա Ն

Հ Ա Յ Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Կ Ա Ն

ԳԻՒՑԱՉՆԱԿԱՆ ՎԻՊԼ

ՀԱՅԻՆԵՐՁ

ՔՆՆԱԴԱՏԱՏՈՒԹԵԱՄԲ ԴՐԵՑ

Բ Ա Գ Ր Ա Տ Խ Ա Լ Ա Թ Ե Ա Ն Ց



Վ Ի Ե Ն Ե Ա

Մ Ի Ւ Թ Ա Ր Ե Ա Ն Ց Ա Պ Ա Ր Ա Ն

1903.

GRAD

DK

680

A94

v.41



Զ Ա Տ Ի Կ Ա Խ Ա Վ Ա Ր Ա Ց Ա Ւ Յ Ա

Զ Ա Տ Ի Կ Խ Ա Պ Ո Յ Ե Լ Ն Ց

Դապոյչնց տնից ԶԱՑԻԿԸ մօտ 50 տարեկան, միջակ հասակի տղամարդ է, բոլորդվին առոյգ դէմքով, լայն կրծով եւ կլոր երեսով, ծածկուած սեւ կոշտ մազերով. արծուի քիթը տալիս է նորան վճաննն եւ համարձակարտայայտութիւն: Նորա հայրենիքն է՝ Մոկս գաւառի Գիմենկանց գիւղը. զվասւոր պարապմանքն է եղել դաշտային աշխատանք եւ կտաւագործութիւն: Դաւթի եւ Մհերի գրոյցն եւ այլ աւանդութիւններ նա լսել է 15 տարեկան հասակում նոյն գիւղի բնակիչ Գրիգորից, որ իբրև „ասող“ հոչակւած էր ամբողջ գաւառում: Զատիկը քսան տարեկան հասակից կրել է երկարամեայ պանդիստութիւն, երեք անգամ բախս որոնելով պոլսում, որտեղ նա անց է կացրել նախ 3, ապա 2 եւ վերջապէս ամբողջ 8 տարի, բանելով ջրաղացում: Վերջին 4 տարին նա անց է կացրել իւր հայրենի գիւղում, որտեղից ապա 1898ին եկաւ է շմիածին. այսուեղ նոյն թուին մենք գրի առանք նորանից մեր “Թղթօր Դաւթի եւ Մհերը”, որ մեր ժողովածուի մէջ ընդարձակագոյնն եւ գեղեցկագոյնն է հանդիսանում. զրոյցս կրնել տուած նոք երեք անգամ, եւ երեք անգամ էլ Զատիկը պատմել է զրեթէ բառացի, առանց որեւէ փոփոխութիւնների:

1. Ա Ղ Ո Ւ Մ Ի Ն.

Maestoso.

Musical score for section 1, featuring three staves of music in 3/4 time with a key signature of one sharp. The lyrics are written below each staff. The first staff starts with 'Դա առ.' (D'a a'r), followed by 'նայ ամ' (nay am), and 'զո զոր' (zo zo'r). The second staff continues with 'մին տը' (min t'ye), 'յը տամ' (ye tam), 'Սել քսեթ քա' (Sel kseseth qa), and 'հա նին' (ha nin). The third staff concludes with 'Դա առ.' (D'a a'r), 'նայ ամ' (nay am), 'զո զոր' (zo zo'r), and 'մին տը' (min t'ye).

2 Մ Մ Բ Ա Մ Ե Լ Ք Ի Ե Ր Գ Ը.

Maestoso.

Musical score for section 2, featuring three staves of music in 3/4 time with a key signature of one sharp. The lyrics are written below each staff. The first staff starts with 'Տըն ցու' (T'yn co'u), followed by 'ու' (u), 'ցի' (c'i), and 'իմ' (im). The second staff continues with 'իս զար' (is za'r), 'ինինդ' (in'in'd), 'իս զա' (is za), 'ար' (ar), and 'իս մար' (is mar). The third staff concludes with 'նո' (no), 'բա' (ba), 'լիւկ' (li'u'k), 'մա' (ma), and 'նուկ' (nu'u'k).

ՀԱՅ ԺԻՂՈՎՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԻՒՑԱՇԽԵԿՈՒՆ ՎԵՐԱ

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Հայ դիցավնական վէպը կպչում է Վանայ ծովի արեւմտեան ափերին, իբրեւ կարկաչահոս սրընթաց գետակ բղխում այն երկրի լեռներից, որ ժողովրդի բերանում Սասուն անունն է կրում։ Տեղի բնական պայմաններն, ինչպէս՝ բարձրագագաթ անմատոյց լեռները, որ փակում են նորան չորս կողմից, անհաւասար գետինը՝ տեղ աեղ ծածկած խիտ անտառներով, պատառած մթին ձորերով, վերջապէս՝ Քրդերի անհանգիստ հարեւանութիւնը պիտի դարեր ի վեր կրթէին եւ սնուցանէին այս լեռնականաց մէջ քաջարի, կտրիճ ոգին, որ այժմն էլ կենդանի է ամէն մի պատանի Սասունցու մէջ, որի երեւակայութիւնն դեռ վառ է պահում նախնեաց հերոսագործութեանց լիշտակը։ Ահա թէ ինչպէս է նկարագրում մեր Ժ. դարի պատմագիր Թովմաս Արծրունին Խութի՝ Սասունին կից լեռնագաւառի՝ բնակիչների կիսալայրենի բարքը։¹ «...բնակութիւն նոցա ի խորաձորս եւ ի փա-

1 Խոյին Հնումն պատկանում էր Ցուրուբերանին, իսկ Սասուն՝ Աղձնեաց գաւառին։

ՀԱՅ ԺԻՂՈՎՐԴՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱ

պարս (քարանձաւ) լերանց եւ ի պրակս մայրեաց, ի գագաթունս լերանց։ Եւ բնակեն առանձին լստ տունս ազգաց, եւ այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժդին խանչեցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբումբիւն ձայնին, իրեւ ի վիմաց ինչ արձագան լինելց կարծիս բերելով, եւ կէպն վըիպեալք ի բնական հայրենի լեզուէն, յաղագս հեռաբնակ լինելց եւ անհամբոյըք միմեանց հանդիպեալք, եւ խօսս միմեանց եղեալ կարկատուն մուլացածի բանիւք։ Եւ այնքան խրթնի անծանօթք պատահեն առ միմեանս, մինչեւ թարգմանաց անգամ կարօտանան. Եւ զգէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի հաց անուանեն. Եւ զնոյն ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատովք սերմանեալ. Եւ է զգեստ նոցա ասուխս (բուրդ) ի ծածկոյթ մերկութեանն, եւ օդ ոտից հնարաւորեն զձեւ կօշկաց, ի մորթոց այծից կազմեալ, եւ միով կերակրով եւ միով հանդերձիւ բաւականան զամառն եւ զձմեռն. Եւ են ստացեալ զէնս աշտեայս (նիզակ) հանապազ կրելով լոնդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանացն ողք ի լերինն բնակեն:

“Այլ եւ ի ժամանակս հասելոց թշնամեաց յերկիրն իւրեանց՝ գան միաբան լեռնայինքն յօգնութիւն իշխանացն, զի են տիրասէլք։ Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն

որ այն ինչ յամկոցն ի վայր զեղեալ լինին՝
հնարաւորեալ իւրեանց փայտս իբրեւ զանուրս
շուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ
ընթանան ի վերայ ձեանն իբրեւ ընդ ցամաք
երկիր։ Եւ են գազանաբարոյք, արիւնարբուք,
առ ոչինչ համարելով զսպանումն եղբարց հա-
րազատաց, նաեւ զանձանց եւս. եւ կոչին սոքա
մեկնակազէնք սուրհանդակք, բնակեալք ի լե-
րինն, որ բաժանէ ընդ Աղջնիս եւ ընդ Տարօն։...
Սոքա են գուեահք Ասորոց, որ չուեցին զկնի
Ադրամելայ եւ Սանսասարայ որդւոյ Սենեքերիմ
արքայի թագաւորի Ասորեստանի եւ Կինուէի,
յորոյ անուն ինքեանք Սանամնայք զնիքեանս
անուանեն. եւ են Հիւրասէրք, օտարընկալք,
պատուադիրք։¹

Զարմանալի չէ, որ այս լեռնականների
բերանում շարունակ դարեր կենդանի են մնա-
ցել տեղական իշխանների, նոցա այլազգեաց
դէմ մղած պատերազմների մասին աւանդու-
թիւններ, որոնք ցարդ դեռ թարմ պահպանուել
են Մուշի եւ Վանայ գաւառում։ Այս
զրոյցների միջավայրն է կազմում “Սասուն քա-
ղաքը”, որտեղ է կեդրոնացած նորա քաջերի
գործունէութիւնը։ Եթէ ճիշդ է մեր պատմա-
գրի անձնական դիտողութիւնն, այս անունն՝
ազգագրական տեսակէտից՝ տարածւում էր եւ
Խոյթի բնակիչների վերայ։

¹ Թուվմայի Աւրդապետի Արծրունւոյ պատմութիւն
առն Արծրունեաց. Պետերբուրգ 1887. Գլուխ է. էջ.
120—121.

Նախ քան այս դիւցազնական զըսյների բովանդակութիւնն առաջ բերելո, աւելորդ չեմ համարում պարզել՝ ա. նոցա աւանդման դայնաները հայ ժողովրդի մէջ. բ. նոցա արուեստական (տեխնիքական) կողմն եւ վերջապէս՝ գ. նոցա արդարութան մշակման նշանակութիւնն:

Ա. “Հայ առաջները” :

Վերջացնելով դաշտային պարապմունքները, հայ գիւղացին սիրում է ձմեռային երկար երեկները կարճացընել հեքեաթներ, երգեր, առաջներ ասելով, որ կազմում են նորա միակ հոգեկան զուարձութիւնը: Բայց նորա ամենասիրելի նիւթն է՝ դիւցազնական զըսյները, որ նա խստիւ տարբերում է շնչոս հեքեաթից, նոցանում պտրելով եփլունիւն: Խմբուելով “ասողի”, շուրջը տաք խեղդաշունչ “օդայում”, որ միայն բարակ ցանկապատով է բաժանեած անասուններից, թէ մեծը եւ թէ փոքրը, բաց ի կանանցից, ուշադրութեամբ ականջ են դնում

* Հայ դիւցազնական զըսյների հաւաքման առաջնորդ պատկանում է արժանայիշատակ Եպիսկ. Արուանձականցին, որ 1874թ. լյու ընծայեց իւր գրի առած “Դաւիթ Սասունցին”, 1889ին, իրեւ երկրորդ փորձ, հանգէս եկաւ Մ. Աւեղեանի “Դաւիթ եւ Մհերը”, ևսկ 1892թ. հայ բանասէրները ծանօթացան Գարեգին Սարկաւագի “Սասմայ ծռերին երկու նոր գարիանաների հետ: Վերջապէս 1899ին գիտական ուղեւորութեան ժամանակ Մոսկուայի կայս. Ըզդ. ընկ. կողմից Երեւանեան նահանգում գրի եմ առած մօտ 12 վարիանաներ, որոնցից ընդարձակագոյնը հրատարակած եմ իջմածնում 1890թ. “Թըլօր Դաւիթ եւ Մհերը վերնագրով”:

Հնութեան հերոսների “Նաղըներին” : Գրեթէ ամէն մի գիւղ մեզանում ունի իւր “ասողը”, որ երբեմն հռչակում է ամբողջ գաւառում. սոքառ թէ արհեստով աւանդապահ պատմողներ են, այլ սովորական գիւղացիներ՝ երկրագործներ, դարբիններ, գիւղական սափրիչներ եւ այլն, որ լսել են այս այն զըսցը “հօրից”, “պապից”, “այս ինչ գիւղի յայտնի ասողից”, “օտարութեան մէջ”, եւ այլն: Զբուցողը ինքն, կատարելով իւր պատուաւոր գերլ, այս աւանդման մէջ զուարձալի րոպէներ է պարում: բնական է ուստի, եթէ նա աշխատում է երբեմն զարդարել իւր զըսցը նոր նոր մանրամանութիւններով եւ կամ զանազան գիւցաղնական վէպերից մի ամբողջութիւն կազմել:

Այս գիւղողական պատմողներին չպէտք է ի հարկէ շփոթել “աշուղների», հետ, որնց արհեստն է կազմում հեքեաթը եւ երգը. իրանց եօթնալար “սազի», հետ նոքա շըջում են քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ ապրուստ հայթայթելու. նոքա միշտ սիրելի հիւրեր են հարուստ մարդկանց աներում, որտեղ մնում են ամբողջ օրեր: Մեծ տօներին այն գիւղում, որ իբրեւ սրբավայր է համարւում եւ որտեղ է կուտակում զանազան տեղերից ժողովրդի խուռն բազմութիւնը, աշուղները մրցում են միմեանց հետ ածելու եւ դժար հանելուկներ լուծելու մէջ. յաղթուածը տալիս է իւր ուղարկած յաղթողին: Կինելով “աշխարհ ման եկողներ”, նոքա վայելում են ժողովրդի համակրանքը. սոքա

Հեռաւոր գիւղերի եւ գաւառների կենդանի հանգստից մէկն են, որ իրանց հետ բերում են մի որ եւ է նոր երգ, առակ, հեքեաթ եւ այլն, եւ կարճ միջոցում տարածում ամբողջ նահանգում։ Հնուց ի վեր գուսանները պատուագոյն դեր են խաղացել ամէն մի ազգի մէջ, լինելով ժողովրդի հոգեւոր կեանքի, նորա աշխարհայիցորութեան բանաստեղծական արտայատիչները։ Հայ աշուղների ծրագիրը բաղկացած է սովորաբար, բաց ի ժողովրդական երգերից, գիւցազնական հեքեաթներից («Քեօռօլի», «Ծահ Խմայիլ», «Ծահ Աբաս», «Արարի-զանգի», եւ սիրահարական երգաբանութիւններից («Դահար Միրզայ», «Քեարամի», եւ այլն), որ տաճկերէն են աւանդւում։

Այսպիսով ուրեմն, ինչպէս տեսանք, հայ գիւցազնական վէալը ամբողջապէս յանձնուած է այս այն գիւղացու պատահական հետաքրքրութեանը, որ տարւայ միայն որոշ ժամանակ ազատ միջոց է գտնում հնութեան զրոյցները իւր յիշողութեան մէջ կենդանացընելու։

Բ. Դիւցանական աւանդութիւննեաց արուեստական կողմէ։

Արդէն արածից պարզ է, ինչու մեր գիւցազնական զրոյցները ըստ մեծ մասին կորցրած են իրանց վիպական բնաւորութիւնն եւ սովորական հեքեաթային ձեւ ընդունել։ Նոյնն է այստեղ պատմելու եղանակն, որ յատուկ է արեւելեան առասպեշներին, առակներին եւ այլն սովորական «կար չկարը», բաց է անում զրոյցի

Թելը, գլխաւոր մասերի կապը թոյլ է, պատմութիւնն անկենդան եւ միանուագ, լեզուն բազմախօս։ Միայն տեղ տեղ փայլում են տեսարաններ, որոնք իրանց դրամատիկական զօրութեամբ զգացուցանել են տալիս, թէ մենք այս-տեղ ժողովրդի աւելի բարձր ստեղծական ոգու հետ գործ ունենք։

Բացի այս հեքեաթաձեւ վարիանոներից ժողովրդի մէջ պարտում են եւ այնպիսիները, որոնք պահպանել են դիւցազնական վիպասանութեանց չափը եւ ձեւը, անդամ նոցանում մեզ հասել են երեւէ, որ ասողը երգում է տիսուրմելամաղձ ձայնով։ Այս թանկագին վարիանտներն աչքի են խիում իրանց գեղարուեստական մշակմամբ եւ բոլոր մասերի գեղեցիկ ներդաշնակութեամբ, որ նոցա պատուագոյն տեղն են տալիս ժողովրդի հոգեւոր արգասեաց շարքում։

Սկսում են սոքա սովորական նախերգով, որի մէջ յիշատակւում է հերոսների մի ամբողջ ազգատոհմ՝

Դառնամ զողորմին տամ Մելքսեթ քաշանին,

Դառնամ զողորմին տամ Բաղդասարին

Դառնամ զողորմին տամ Մհերին

Դառնամ զողորմին տամ Թըռլան Դաւթին եւ այն. մինչեւ տոհմի վերջին հերոս փոքր Մհերը. “ողորմին, կրկնուում է ամէն մի զըսցի սկզբում, որ այս այն դիւցազնի գործունէութեանն է նուիրւած։”

Նախերգին անմիջապէս հետեւում է զրոյցը, որ սահմանափակուած է կարճ՝ կարծես թէ չափաւոր նախադասութիւններով, այնպէս որ իւրաքանչիւր տողում լրանում է մի միտք. այս պատճառով պատմութիւնն ինքն լստ ինքեան ոտանաւորի ձեւ է ընդունում, մի քանի տեղերում լսելի է անգամ չափը, որի շնորհիւ պահպանուել են աւանդութեանց լաւագոյն կտրւները։ Բնաւ պատահական չեն երգերը, որոնք սոցանում հանդէս են գալիս. նոքա արտայայտում են մերթ աղօթք, մերթ խնդիր, մերթ յուսահատութիւն կամ զարմանք, միով բանիւ հերոսի կամ հերոսուհու հոգեկան դրութիւնն։ Ասողը սիրով կանդ է առնում դիւցաղնի զէնքերի նկարագրութեան վերայ, որ՝ ինչպէս ամէն մի ազգի վէպին յատուկ է՝ բառացի կրկնում է ամէն մի դէպքում, առաջ է բերում ամբողջ պատմութիւններ որ եւ է անցքի մասին գործող անձանց խօսքերով, եւ աւասիկ այս կրկնութիւններում, որպէս եւ կոռուի եւ մահուան հրաշագեղ տեսարաններում, պատմութիւնը բանաստեղծութեան ոգի եւ ձեւ է ընդունում։

Օրինակի համար առաջ եմ բերում երկու կտոր արձակ պատմութիւնից, որտեղ առաւելապէս աչքի է խփում վանկերի հաւասար չափը՝

Մըսրամելիք ըզձին խեծաւ (8 վանկ)
Իրի գեորզըմ էզարկ Դաւթին՝ (8 վանկ)

գեախ ընդ գեախ¹ թող դադրաւ վերէն.
(8 վանկ)

Մսրամելիք էսաց՝ խողածին, (8 վանկ)

Խող էր, խող դարձաւ: (5 վանկ)

Թող վիրցաւ, տեսաւ: (5 վանկ)

Դաւիթ ադտեղ նըստուկ ի.² (7 վանկ)

Եւ կամ՝

Դաւիթ էսաց՝ խանդիւթ խաթուն, (8 վանկ)

Յուխտ ընը վըր իւր խոգիւն՝ (7 վանկ)

Մընչիւ իս իմ փոխ չէնիմ՝ (7 վանկ)

Զքի աստեղէն ըը տանիմ: (7 վանկ)

Դաւիթ քուլախ³ առից վէ, (7 վանկ)

Էսաց՝ օղորմած Աստուած (7 վանկ) Եւ այլն:⁴

Ինչ կը վերաբերի վէպիս բուն երէբէն,
Վանկերի շափն այստեղ բազմատեսակ է. պա-
տահում են 12 Եւ 10, 10 Եւ 8 կամ միա-
նուագ 7 կամ 6 վանկեանի երգեր. օրինակի
համար՝

Սարի՛ր, քեամիմ կուզիմ, (6 վանկ)

Զիւրի՛ր, քեամիմ կուզիմ՝ (6 վանկ)

Նա մէկ տակ սուն շուռ տէր.⁵ (6 վանկ)

Եւ կամ՝

Օղորմած բարերար Աստուած, (8 վանկ)

Անունք էլինին բամբակ, իս իլնըմ կրակ
(10 վանկ)

¹ Առաւոաից մինչեւ միւս առտուօտ:

² Տես իմ “Թըլօր Դաւիթ Եւ Մհերն էջ 40-41:

³ Գդակ:

⁴ Կոյնտեղ՝ էջ 47:

⁵ Կոյնտեղ՝ էջ 33:

Իս չըմ կենայ անունք իրիցըցէ. (10 վանկ)
 Օղորմած բարերար Աստւած, (8 վանկ)
 Անունք էլնին գեարնան մատղաշքիր, (9 վանկ)
 Իս ինըմ գեարնան անութի գէլիր՝ (10 վանկ)
 Իս չըմ կենայ զանունք կճռի:՝ (8 վանկ)

Ամէն մի հերոս, ամէն մի զէնք ունեն
 իրանց յատուկ մականունները. Դաւիթը “Թըր-
 լօր”, (թըրլւաս) է կոչւում (երեխայ ժամանակ
 նա այրել է իւր լեզուն), նորա հայրը “Առու-
 ծաձեւ, Մհեր, հօրեղբայրը՝ “Զէնով”, Յովան.
 Կան անդամ լոկ մականուններ՝ Փոքրիկ Ճնձղիկ,
 Ճնձղկափորիկ, Խոր Մանուկ, Խոր Գուսան եւ
 այլն: Սասունի հերոսները միագումար “Ճուռ-
 անուամբ են մկրտուած ժողովոդի բերանով:
 Դաւթի զէնքերն են՝ թուր հեծուին, գուրզ
 հաշորին, շապիկ զեխին, թագն ի զեխին եւ
 այլն: Այս մականուններն այն աստիճան ձու-
 լուած են գործող անձանց եւ առարկաների
 անուանց հետ, որ այս կազմութեամբ անփոփոխ
 հանդէս են գալիս բոլոր վարիանտներում:

Գ. ՏԵՂԱՔԻՆ ՀՀԱՀՄԱՆ ՊՂԲԵՋԱՆԱՒԵՆԸ:

Այս աւանդութեանց մեծագոյն մասը գրի
 է առնուած Ռուսահայաստանի սահմանագլխում
 ապրող գաղթականներից. այս “ասողները, ըստ
 մեծ մասին ծնած են արդէն օտարութեան մէջ,
 ուստի ծանօթ են դաւթի եւ Մհերի զըսցների

¹ Նոյնաեղ՝ էջ 33. — ա կարդալ կոկորդից, գ, ք, ն
 փափուկ արտասանել:

Հետ միայն իրանց հայրերի եւ պապերի շնորհիւ, որոնք բերած են եղել իրանց հետ հայրենիքից բանաւոր աւանդութեանց հարուստ պաշար։ Այս հանգամանքն՝ հարկաւ, զրոյցների տեղական մշակման վերայ պիտի ազգէր եւ գլւաւոր պատճառ դառնար այն արուեստական հանգոյցին, որով ժողովուրդը, թէպէտեւ անգիտակցաբար, ճգնում է կապել տարբեր դիւցազնական վէպեր միմեանց հետ։ այսպէս՝ միքանի զրոյցներում Սասունի քաջերի ազգատոհմը շարունակում են իրուստամ, ֆահրամազ, Բուրզէ եւ այլ իրանական հերոսները, որոնց գործունէութիւնը դարձեալ սկիզբն է առնում “Սասուն քաջարից”։ Այս տարօրինակ շփոթումը առաջ է եկել, անկասկած, երկու դիւցազնական աւանդութեանց ընդհարումից, որոնք ժողովրդի երեւակյութեան մէջ սերտ միացել են շնորհիւ հայ եւ պարսիկ հերոսների բարյական եւ ֆիզիքական յատկութեանց նմանութեանը։ Հայոց Դաւիթը անպայման կրում է իրանի փահլեւանների կնիքը, միեւնոյն ժամանակ մնալով ժողովրդի սիրելին։

Հայ ժողովրդական դիւցազնական վէպի բովանդակութիւնը:

Առաջին է Առիքելք+ (Բաղդասար)։

Սենեքերիմ թագաւորը պաշարել է երուսաղէմը։ Տրեշտակները կոտորում են նորա զօրքերը, եւ նա ինքն հաղիւ կարողանում է

փախստեամբ փրկել իւր կեանքը, ուխտ անելով իւր ջոջ կուռքին՝ զոհ բերել իւր երկու որդիքը՝ Սանասարին եւ Ասլիմելիքին՝ եթէ ողջանդամ տուն դառնայ: Նոցա մայրը (նա գաղտուկ քրիստոնեայ էր!), իմանալով այս բանի մասին, շտապում է իւր որդիքը հեռու երկրներ ուղարկել: Բայց ուր որ գալիս են պանդուխտ եղբայրները, ամէն տեղ նոցա հրաժարում են հիւրընկալել, հէնց որ լսում են նոցա խրոխտ հօր անունը. յուսահատուած՝ նոքա վճռում են թագցընել իրանց ծագումը: Պատահելով ճանապարհին սրընթաց լեռնային առուակի, որ ուժգնաբար կտրում էր մեծ գետի հոսանքը, նոցա ամրոցի հիմք են դնում նորա ական մօտ: Վերջապէս եղբայրները ապաստան են գտնում “արեւմուտքի”, թագաւորի դրանը, մտնելով նորա մօտ ծառայութեան:

Մի օր թագաւորը՝ կամենալով փորձել իւր հիւրերի ընդունակութիւնը, առաջարկում է նոցա կուել իւր զօրքի հետ. Սանասարը եւ Ասլիմելիքը ջարդում են իրանց բոլոր հակառակորդներին եւ սարսափ տարածում նոյն իսկ թագաւորի վերայ, որ՝ կամենալով ազատել վտանգաւոր օտարականներից՝ հրամայում է նոցա հեռանալ իւր երկրից: Այն ժամանակ եղբայրները յիշում են իրանց ամրոցի մասին եւ ինդրում թագաւորից մի քանի տասնեակ ընտանիքներ ընտրած տեղում քաղաք շինելու. սա ուրախութեամբ կատարում է նոցա ինդիրը, անգամ տալիս իւր դուստրը

Սանասարին կնութեան, իսկ ամրոցն անուանում Ասունա:

Հօր “ջոջ”, կուռքը հանգիստ չէ տալիս Ասլիմելիքին՝ գիշերները այծի կերպարանքով գալիս կանգնում է նորա գլխիվերեւը եւ անդադար “մկմկում”. Ասլիմելիք վճռում է տուն վերադառնալ: Ուրախացած հայրը իսկոյն տանում է որդուն կոատուն՝ եւ հրամայում նորան երկրպագել “ջոջին”, նախ քան նորան զօհեն. որդին ինդրում է հօրը ցցց տալ իրան, թէ ինչպէս է սա կատարում, եւ երբ թագաւորը տարածւում է երեսիվայր գետնի վերայ, Ասլիմելիք սրի հարւածով կտրում է նորա գլուխը, փշրում կուռքերը եւ նստում գահի վերայ:

Ս Ե Ծ Ս Հ Ե Ր

Սանասարին ծնաւ մի որդի՝ Մհերը:

Երբ նա գեռ 15 տարեկան էր, Սասունի շրջակայքում երեւեցաւ մի սոսկալի առիւծ, որ կտրեց ամէն մի երթեւեկութիւն: Թանկութիւն ընկաւ: Պատանի Մհերը դուրս է գալիս գաղանի դէմ, մենամարտում նորա հետ եւ Աստուածաշնչի Սամոնի պէս երկու կէս անում նորան, ամէն մի կէսը դնելով Ճանապարհի երկու կողմը. այս պատճառով նա “Առուծաձեւ, կոչւեցաւ:”² Այս հերոսագործութիւնից յետոյ

¹ Որ ըստ ժողովրդի բացատրութեան նշանակում է Ալիւնը սան վերայ, ու աւելորդ է նկատել, որ սա անյաջող փորձերից մէկն է մեկնել տեղիս մժին անունը:

² Այս նահատակութիւնը բնաւ ծանօթ չէ Մհերի

Մհեր գնում է իւր հօրեղբօր՝ Ասլիմելիքի՝
մօտ Մըսըր, ¹ որտեղ մի այրի կնողից նորան
Մսրամելիքն է ծնում, ապա այստեղից վերա-
դառնում դարձեալ Սասուն:

Սանասար ժողովրդի խնդրանքը որդու հա-
մար հարսնացու է որոնում՝ իւր աներոջ եւ
նորա վէզիքի հետ միասին գնում է Մանազկերտ
Թեւա-Թորոսի դատեր ձեռքը խնդրելու. տանը
չգտնելով նորան, հարսնախօսերը շտապում են
նորա յետեւից Վան, Էրզըռում եւ Ղարս, որտեղ
Թեւա-Թորոս գեռ նոցա գալուստից առաջ ամ-
րոցի հիմք է դնում. վերջապէս նորան գտնում
են դարձեալ Մանազկերտում: Լսելով նոցա
գալստեան պատճառը, Թեւա-Թորոս առանց
տատանելու տալիս է Մհերին իւր դուստրը,
իբրեւ հարսնաղբէր հետը դնելով քեռի թոռ-
րոսիկին:

Մհերին ճնան երեք որդի՝ Ցռան Վէգոյ,
Փաքրիկ Ճնձղիկ եւ Դաւիթ:

Սանասարի մահից յետ՝ Մհեր աղքատու-
թեան մէջ լնկաւ եւ տարաւ իւր որդիքը Մըսըր
Մսրամելիքի մօտ (որ սպանելով Ասլիմելիքին՝
գրաւած էր Թագաւորութիւնը). Մհեր նորան
է յանձնում տղաները, ընծայում եւս իւր Ծո-
վասար եւ Ճապաղջուկ-Քոդէ կալւածները եւ
ինքն մեռնում վշտից:

աւանդութեանց մեծամասնութեանը, որ առ հասարակ ան-
դոյն դեր է խաղում մեր դիւցազնական վէպում:

¹ Այս անւամբ յայսանի են մեր ժողովրդական աւան-
դութիւններում Եգիպտոս եւ նորան կից երկիրները:

Դ Ա Ւ Ւ Թ

Հայ դիւցազնական վէպի ամենաճռիս մասն կազմում են դաւթի եւ նորա որդի Մհերի զըսցներն, որ մեզ են հասել երկու գլխաւոր խմբագրութեամբ. առաջնն, որ ըստ երեւութիս, բանահիւսւած է այս դիւցազների հայրենիքից հեռու, հանդէս է բերում նոցա արդէն հեքեաթային քողի տակ, անկասկած, այլազգի աւանդութեանց ազդեցութեան ներքոյ. երկրորդն՝ ուղական, Մոկաց ասոլների քերթւածը, ինչպէս արդէն նկատեցինք վերեւում, բաւական դեռ թարմ է պահպանել դիւցազնական զըսցների վիպական բնաւորութիւնն՝ իւր կենդանի պատմութեամբ, պատկերների նուրբ գծագրութեամբ եւ բովանդակութեան ամբողջութեամբ:

Կը սկսեմ երկրորդ խմբագրութիւնից:

Մհեր եւ Մսրամելիք բարեկամ են. Մսրամելիքի մահից յետ նորա այրին սիրահարական յարաբերութիւններ է սկսում Մհերի հետ. այս կապից ծնում է Մսրամելիք-որդին. Մհերը զղջում է, որ “տաճկի ճրագ վառեց, խայուն ընցուց”, Մըսրից վերադառնում է Սասուն իւր կնոջ մօտ, որից ծնում է դաւիթը: Զգալով մահի մերձենալը, ծերունին խնդրում է “Հօրեղբօր”, Զէնով Յովանին իւր եւ կնոջ մահից յետ դաւթին յանձնել Մսրամելիքի կնոջը: Զէնով Յովան կատարում է նորա կտակը:

Մի անգամ փոքրիկ դաւիթը խնդրում է իւր խորթ մօրից՝ թոյլ տալ իրան Մսրամելիքի հետ միասին գնալ դաշտ, որտեղ երիտասարդ

Իշխանը սովորաբար “յեռէ”¹ (գնտակ) էր խաղում։ Մօր ստիպմամբ Մսրամելիք տանում է Դաւթին իւր հետ եւ նստացնում հեռուում, յանձնելով նորան երկու կտրիճների հոգատարութեանը, բայց երեխան, ոչինչ չտեսնելով, բարկացած տուն է գալիս, իւր յետեւից քարշելով իւր պահապաններին։ Միւս անգամ չարաձին մանում է քարի փոսը, որ խաղի մէջ նպատակ էր ծառայում, եւ չի ու զում այնտեղից դուրս գալ։ Մսրամելիք հրամայում է “յեռէն, նետել եւ սպանել նորան, բայց Դաւթիթը բռնում է գնտակը, սպանում նորանով 200 մարդ եւ տուն փախչում։

Մսրամելիք վճռում է իւր խորթ եղբօրը կորուսանել, վտանգ զգալով նորանից։ մայրը առաջարկում է նախ փորձել երեխայի հասունութիւնը։ Նորա առջեւ գնում են երկու մատուցարան՝ մէկի վերայ ոսկի, միւսի՝ կրակ է շողում։ Երբ Դաւթիթ ցանկանում էր ձեռքը դէպի ոսկին պարզել, Աստուծոյ հրեշտակն ուղղեց նորան դէպի կրակը։ Այրւած մատը երեխան տարաւ բերանը՝ այրեց եւ լեզուն, որի համար “Թըլօր Դաւթիթ”, կոչւեցաւ։ Բայց Մսրամելիք մնում է անողորմ։ այն ժամանակ մայրը խորհուրդ է տալիս որդուն, որպէս զի մեղքի մէջ չընկնել, ուղարկել որբին Զէնով Յովանի մօտ։ Մսրամելիք գազուուկ հրամայում է Դաւթիթի ուղեկից երկու կտրիճներին սպանել նորան բաթմանի¹ կամրջի վերայ եւ մի կուժ լի նորա

¹ Բաթման՝ գետ է Սասունում։

արիւնով բերել նորան, որպէս զե “խմէ, սիրաը
խովանայ” . բայց այս փորձի ժամանակ հազիւ
թէ իրանք կտրիձները կեանքից չզրկւեցին.
իրանց փրկելու համար, նոքա երդւում են մա-
նուկ հերոսին՝ յաւիտեան նորան ծառայել, ինչ-
պէս ծառայած են նորա հօրը: Դաւիթ նոցա
հետ միասին հասնում է հայրենական քաղաքը:

Զէնով Յովան ուղարկում է դաւթին
ուշեր արածելու, տալով նորան մի զսյգ պող-
պատէ սօլեր եւ մի պողպատէ գաւազան: Բայց
չափազանց եռանդուն պատանի հովիւը բերում
հօտի հետ է խառնում զանազան տեսակ գա-
զաններ եւ երեկոյեան բոլորին քաղաք քշում:
Սարսափած բնակիչները փակւում են իրանց
տներում: Անւանի քաղաքացիք գանգատում են
Զէնով Յովանին, որ նորա եղբօրորդին չգիտէ
զանազանել գազանները ուլերից: Այս անգամ
դաւիթ ստանում է կովեր եւ եղներ, բայց նոյն
եռանդն նա այստեղ եւս ցոյց է տալիս՝ նորա
սօլերը եւ գաւազանը մաշւել են, այնչափ նա
վազած է գազանների յետեւից: Այն ժամա-
նակ հօրեղբայրը տալիս է նորան նետ եւ աղեղ
եւ որսի ուղարկում:

Մսրամելիք ուղարկում է կուղբագէնին
Սասուն հարկ բերելու. հարկահանը պահան-
ջում է **Զէնով Յովանից**

Քեառսուն անծին շիւշաք¹ կուղիմ,
Քեառսուն անծին երինջ կուղիմ,

1 Մաքի:
ՀԱՅ ՀԱՅ. ԴԻՏԸ. ՎԵՊԸ

Քեառոսուն ըղտաբեռ ոսկի կուզիմ,
Քեառոսուն ազապ աղջիկ կուզիմ էրկանք
աղան,
Քեառոսուն յէրկէն կնիկ կուզիմ ուղտ բառ-
նան:¹

Դաւիթ այս ժամանակ որսում էր մի պա-
ռաւ կնոջ կորեկի մէջ. իմանալով նորանից
կուզբադէնի անդութ վարմունքի մասին, նա
շտապում է ազատել տներում փակած կանանց,
աղջկերանց եւ անասունները եւ արտաքսում
տանից նցն իսկ հարկահանին այն ժամանակ,
երբ հօրեղբայրը՝ չոքած՝ նորան “կոտով” ոսկի
էր չափում:

Դաւիթ դարձեալ որսի է գնում. պա-
ռաւը, տեսնելով իւր կորեկի փճանալը, յան-
դիմանում է դաւթին եւ ցոյց տալիս նորա հայ-
րական որսատեղի վերայ: Հետեւեալ առաւօտ
դաւիթ իւր հօրեղբայր հետ գնում է այնտեղ
“նէճիրին”. նկատելով, որ որսատեղը պարսպած
է, նա հրամայում է դուրս թողնել գազաննե-
րին, ասելով՝ “որ կարիճ է՝ ուր խամար թըզ
բռնի: Գիշերը ԶԵԽով Յովան դաւթի փէշը
գնում է իւր տակը, որպէս զի քնի ժամանակ
անհանդիսա երեխան չգնայ մի փորձանքի հան-
դիպի: Դաւթի քունը չի տանում. նկատելով
մօտակայ լեռան վերայ լցոն, նա կարում է դա-
նակով իւր փէշը, բարձրանում լեռան գա-
դաթը, գծում լուսավառ քարի շուրջը եւ վե-

¹ Ցես իւր “Թըզօր Դաւիթ եւ Մհերն էջ 13:

բագառնում իւր տեղը։ Արթնելով քնից՝ հօ-
րեղբայրը պատմում է նորան, որ այս լեռան
վերայ մի ժամանակ նորա հայր Մհերը շինած
էր «Մարութայ բանձր Աստւարածին», վանքն,¹
որ ապա Մսրամելիք աւերեց։ Դաւիթ վերա-
կանգնում է վանքն եւ դնում նորա մէջ «40
նորընծայ էրէց, 40 վարդապետ, 40 էպիսկո-
պուս, 40 աւագ սարկաւագ, 40 սարկաւագ» եւ
նոցա պահապան՝ Յարատայ Քեամին եւ բաթ-
մանայ Բիւղին։

Մսրամելիք, իմանալով սորա մասին, կրկին
ուղարկում է Կուզբագէնին Սասուն, որ աւե-
րում է վանքն եւ սպանում ամբողջ միաբանու-
թիւնն. մահից պրծնում է միայն մի սարկաւագ,
որ այս գյոժը բերում է Դաւթին. Հերոսը,
դնելով ուսին արմատահան արած ծառը, հաս-
նում է թշնամիների յետեւից եւ բոլորին
կոտորում, իսկ Կուզբագէնին՝ քարշելով նորա
ատամերն եւ շարելով ճակտին՝ արձակում
գուժիան Մսրամելիքի մօտ։ Վանքն նորից շին-
ուամ է։

Մսրամելիք զօրք է գումարում եւ ար-
շաւում Սասունի վերայ. զօրքը գալիս բանա-
կում է Լիւռայ դաշտում։

Դաւիթ լսում է այս նոր վտանգի մասին
նոյն պառաւից, որ՝ կամնալով փրկել իւր կո-
րեկը՝ յիշեցնում է նորան նորա հօր զէնքերի
եւ քուռկիկ ջալալի մասին. պատանի դիւցազնը

1 Այս վանքն այժմ էլ կարելի է տեսնել Սասունում։

կուի է պատրաստում եւ պահանջում հօրեղ-
բօրից՝

Քենէ կուզիմ իմ խօր քուովիկ ջալալին,
Քենէ կուզիմ իմ խօր թուր կէծակին,
Քենէ կուզիմ իմ խօր խաչ պատրազին վար
աջ թեւին,

Քենէ կուզիմ իմ խօր ոսկի գիւտին,¹

Քենէ կուզիմ իմ խօր կապէն խարիւկին,

Քենէ կուզիմ իմ խօր ոսկի քեամար,

Կը տաս խաթրեով, չխօ՝ կէնիմ զօրեով:²

Չեսով Յովան ակամայ տալիս է նորան
պահանջած զէնքերն, իսկ խաչ պատրազին՝
Դաւթի աղօթքի զօրութեամբ՝ ինքն թռչում
նստում է նորա աջ թեւի վերայ. բայց հօր
պատերազմական զրահներն չափազանց մեծ են
փոքրիկ դաւթի համար՝ ոսկի քեամար 40 փաթ
փաթաթեց, ապա նոր կոճկեց, ոսկի գիւտին
“40 լիտր բամբակով, լցրեց, նոր նստաւ գլխին:

Հետեւելով հօրեղօր խորհրդին, Դաւիթ
կուից առաջ քնում է իւր հօր “կաթնաղ-
բիւրին, մօտ, խմելով նորա ջրից. Հետեւեալ
առաւտօտ նա տեսնում է իրան լցւած եւ հսկայ-
ական հասակ ստացած. այժմ զրահներն հազիւ
վերան են գալիս:

Կամենալով փորձել թուր կէծակի զօրու-
թիւնը, հերոսը մի հարւածով կէս է անում
ճանապարհին պատահած պողպատէ սիւնը. ապա
վստահ գնում թշնամու դէմ:

¹ Սաղաւարու:

² Նոյնաւեղ՝ էջ 26:

Մսրամելիք Դաւիթի համար դարան է պատրաստել՝ խոր փոս է փորել եւ վերեւից թաղիսով ծածկել։ Սասունցի գիւցազնը գտնում է իւր հակառակորդին “եօթ օրւայ քնով քնած”։ Դաւիթ արթնացնում է նորան, հրավառ գութնի խոփը դնելով ոտերի տակ։ Մսրամելիքի եւ մօր ինդրանօք նա իջնում է իւր ջալալից հանգստանալու եւ ընկնում դարանի մէջ։

Զենով Յովան վատ երազ է տեսնում, իբրեւ թէ Մըրարի աստղը վառ փայլում է, իսկ Սասունին՝ հազիւ պսպղում։ Հասկանալով, որ Դաւիթ վտանգի մէջ է, նա նստում է իւր արագաթուիչ նժոյգի վերայ, մի ակնթարթում համում կուի դաշտն եւ իւր ուժգին ձայնով յիշեցնում դաւթին խաչ պատրազի սքանչելի զօրութեան մասին։ Դաւիթ աղթթով դիմում է իւր հօր վանքին եւ խաչին¹ եւ իսկոյն դուրս գալիս լոյս աշխարհ։ Ազա տեղի է ունենում երկու ախոյեանների հոչչակաւոր կոփւը։ Մսրամելիք երեք անգամ հարւածում է Դաւթին, բայց ամեն անգամ միայն փոշի է բարձրացնում նորանից։ Հերթը Դաւթինն է։ Մսրամելիք մտնում է “40 գեազ”, փոսի մէջ, վերան դարսել տալիս “40 ջաղցի քար, 40 գոմչի կաշե”, մայրը առաջ է գալիս եւ խնդրում հերոսից՝

¹ Հացն ու գինին, տէր կենդանին,
Մարութայ բանձրիկ Աստւածին,
Խաչ պատրազին ընչ փառ աջ թեւին
Հերոսի սովորական աղօթքն է նեղ բօպէներում։

Երան բաշխել որդու կեանքը. Դաւիթ ընծայում է նորան երկու հարւած, իսկ երրորդով կտրում “40 ջաղցի քարը, 40 գոմչի կաշին, եւ իրան Մարամելիքին երկու կէս անում:

Ըստ Երիրդ խմբագրութեան՝ Հերոսի խնամատարը Քեռի Թորոսն է Հանգիսանում: Եիշելով ՄՇերի որբերի՝ Զէնով Յովանի, Ցուան Վէգոյի եւ Դաւիթի (այլ վարիանտներում եւա՝ Փոքրիկ Ճնձղկի, Խոր Մանուկի, Խոր Գուսանի) մասին, որոնց հայրը թողած էր Մըսրում, Քեռի Թորոսը շտապում է նոցա այնտեղից Սասուն քերել: Մարամելիքը Համաձայնում է միայն այն պայմանով նոցա արձակել, եթէ նոքանախապէս նորա սրի տակից անցնեն: Մեծ եղբայրները անցնում են, Դաւիթը յամառում է. միայն իւր Քեռու յորդորանաց զիջանելով՝ նա թռնում է սրի վերայից, ոտը քարին է առնում, քարից կայծ է ցայտում: Սոսկաց Մարամելիք, վտանգ զգալով նորանից:

Ցուան Վէգոն նստում է թագաւոր Սասունում, իսկ Դաւիթին ուղարկում են Հորթեր արածելու: Արօտում նա եղբայրանում է Հարեւան գիւղի հովիսի հետ. մի անգամ, իմանալով նորանից, որ նոցա գիւղում այդ օրը պատարագ կայ, Դաւիթը շտապում է եկեղեցու գաւիթը եւ չսպասելով պատարագի արձակման, անց է կացնում իւր գաւաղանը “մատաղին կաթսաներից մէկի կանթը եւ բերում իւր եղբօրը: Սա արտասուքն աչքերին պատմում է Դաւիթին, որ նորա բացակայութեան ժամանակ

Եկան 40 աւազակներ եւ հօտից 40 կով տարան։
 Հերոսը առնում է իւր գաւազանը, հետամուտ
 լինում նոցա եւ ծածկում մի այրի մէջ։ Սար-
 սափը տիրեց աւազակներին, երբ նորա դիւցազ-
 նական գոչը լսեցին, եւ սկսեցին մի առ մի դուրս
 գալ իրանց թագստեան տեղից. սպաննելով նոցա,
 Դաւիթ մտնում է այրի մէջ, որտեղ գտնում է
 կուտակւած զանազան տեսակ գանձեր. բայց
 ամէնից առաւել նորան սիրելի է քուռկիկ Զա-
 լալին. մի կողմում եփ է գալիս կաթսան կո-
 վերի կաշիների մէջը։ Դաւիթ վերադարձնում
 է կաշիները իւր ընկերոջ համագիւղացիներին
 եւ սպանում նոցա “Դաւիթի աւերածով”,
 եթէ նոքա իւր եղբօր ռոճիկի գէթ մի փոքր մասն
 անգամ կտրեն. ապա իւր քեռու օգնութեամբ
 նա տուն է բերում գանձերը, իսկ իրան իրեւ-
 ընծայ ստանում քուռկիկ Զալալին։

Հետեւեալում երկու խմբագրութիւն-
ները նման են։

Աւանդութեան շարունակութիւնն է
 Դաւիթի պսակը Խանդութ Խաթունի հետ։ Հե-
 րոսը նշանաւած է Զմէցիկ Սուլթանի հետ, բայց
 Տրապուրւած Խանդութի գեղեցկութեամբ, որ
 գովում են կապուտկողի արքայադստերից ու-
 ղարկւած աշուղները,¹ նա վճռում է ամենայն

1. Իկին գեղ իկին էրկու կաղուզան,
 Խանդիւթ Խաթուն Դաւիթի խամար գեռվացին՝
 Անու բաժ բալէ* կ'իւրցին՝
 Քեռուսուն կանդիւնը, մէկնէւ յաւիւ ը.

* Հասակ։

գնով նորա ձեռը ստանալ։ Ճանապարհին նա պատահում է մի մանձկալի,¹ որ քշում էր իւր գութանը երկու գոմեշով լծած։ Դաւիթ արձակում է անասունները, իւր մէջքն է փաթաթում գութենի շղթան եւ եօթ “փաթ”, վարում։ Զարմացած մանձկալը նկատում է, որ “Հունարը” ձիանն է։ Հերոալ իջնում է ձիուց եւ եօթը փաթ եւս վարում։ Գիւղից ճաշ են բերում, եւ մանձկալը հրաւիրում է անծանօթ փահլեւանին միասին ճաշել։ Դաւիթ մաքրում է բոլոր ամանները եւ սարսափ տարածում իւր սեղանակիցների վերայ. “Հայ տղէք, փախէք, էսի մեզի էլ կուտայ, գոչում է մանձկալը։ Կամենալով փորձել իւր բախտը, թէ արդեօք ստանալո՞ւ է խանդութի ձեռքը, դիւցազն մի սրի հարւածով կէս է անում գութանը։ Վարձատրելով մանձկալին նորա վնասի համար, նա շարունակում է իւր ճանապարհը։

Եօթ փահլեւաններ արդէն երեք տարի է խանդութ խաթունի արքունիքում սպասում են իրանց ընտրութեանը. Հազիւ խանդութ նկատում է Դաւիթին պատուհանից, իսկոյն նետում

Անու ճակտու լէնուտ կ'խարցիս՝
Եօթ կանգիւն ը, մէկն էլ յաւիլ ը.
Անու ընքափի կ'խարցիս՝
Կալամով ին քէլած.
Անու աչքիր կ'խարցիս՝
Զինու կըթիւն ը.
Անու սըւտկութիւն կ'խարցիս՝
Քանց գէզած բամբկի քիւլէն սըւտակ ը.
(թ. Դաւիթ էլ 44—45.)
1 Գութան վարող.

է նորան ոսկէ իննձորը։ Փեսաները խօսք են անում միմեանց հետ արբեցընել իրանց բախատաւոր հակառակորդին եւ սպանել նորան։ Խնջոյք են պատրաստում եւ թագցընում իրանց սրերը սեղանի ծածկոցի տակ։ Հերոսը իմանում է նոցա չար դիտաւորութեան մասին դունապան Գորգիզից, որին իրան քաւոր է նշանակում։ մտնելով Խնջոյքի սենեակը, նա միանգամից դատարկում է գինով լի կաթսան եւ կոտրատում դաւադիրների սրերը։ Փեսաները դուրս են փախչում, մի մի ապտակ իջեցնելով քաւոր Գորգիզին։ Բայց թանգ արժեցաւ նորան իւր հարսից մի աւելորդ համբոյր քաղելու փորձը՝ դիւցազնուհին բռնցքի հարւածով արիւնում է նորա երեսը։ Դաւիթ բարկացած խնդրում է Աստղծուց դէպք տալ նորան իւր անպատութեան գրէմը առնելու։ Արթնելով հետեւեալ առաւօտ՝ նա տեսնում է խանդութի քաղաքը նորա հօր թշնամիներով պատաժ։ իբրեւ փեսայ, կուի նա պէտք է գնայ։ Արդէն երեք օր է, որ Դաւիթ չկայ։ Խանդութ, չհամբերելով, տղամարդի զգեստ է հագնում, զինավառում եւ գնում Դաւիթի դիակը որոնելու։ պատահելով նորան ճանապարհին, աղքայադուստրը նորան չի ճանաչում եւ կուի բռնւում։ Հերոսը նորան երիվարից գետին է գլորում, չորում կրծքի վերայ եւ պատրաստ է արդէն մահացու հարւածը իջեցընել, երբ մի զյգ սիւտակ ծըծերը, դուրս են պրծնում, եւ Դաւիթ ճանաչում է իւր հարսին։

գնով նորա ձեռը ստանալ։ Ճանապարհին նա պատահում է մի մանձկալի,¹ որ քշում էր իւր գութանը երկու գոմեցով լծած։ Դաւիթ արձակում է անասունները, իւր մէջքն է փաթաթում գութինի շղթան եւ եօթ “փաթ”, վարում։ Զարմացած մանձկալը նկատում է, որ “Հունարը” ձիանն է։ Հերոալ իջնում է ձիուց եւ եօթը փաթ եւս լարում։ Դիւղից ճաշ են բերում, եւ մանձկալը հրաւիրում է անծանօթ փահլեւանին միասին ճաշել։ Դաւիթ մաքրում է բոլոր ամանները եւ սարսափ տարածում իւր սեղանակիցների վերայ։ “Հայ տղէք, փախէք, էսի մեզի էլ կուտայ, գոչում է մանձկալը։ Կամենալով փորձել իւր բախտը, թէ արդեօք ստանալո՞ւ է խանդութի ձեռքը, դիւցաղն մի սրի հարւածով կէս է անում գութանը։ Վարձատրելով մանձկալին նորա վնասի համար, նա շարունակում է իւր ճանապարհը։

Եօթ փահլեւաններ արդէն երեք տարի է խանդութ խաթունի արքունիքում սպասում են իրանց ընտրութեանը։ Հազիւ խանդութ նկատում է Դաւիթին պատուհանից, իսկոյն նետում

Անու ճակտու լէնուտ կ'խարցիս՝
Եօթ կանգիւն ը. մէկն էլ յաւիլ ը.
Անու ընքաիր կ'խարցիս՝
Կալամկ ին քէշած.
Անու աչքիր կ'խարցիս՝
Չինու կըթիւն ը.
Անու սըւտկութիւն կ'խարցիս՝
Քանց գէզած բամբկի քիւլին սըւտակ ը.

(Թ. Դաւիթ էլ 44-45:)

։ Գութան վարող։

է նորան ոսկէ իմնձորը։ Փեսաները խօսք են անում միմեանց հետ արբեցընել իրանց բախտաւոր հակառակորդին եւ սպանել նորան։ Խնջյք են պատրաստում եւ թագցընում իրանց սրերը սեղանի ծածկոցի տակ։ Հերոսը իմանում է նոցա չար դիտաւորութեան մասին դռնապան Գորդիզեց, որին իրան քաւոր է նշանակում։ մտնելով խնջյքի սենեակը, նա միանգամհից դատարկում է գիսով լի կաթսան եւ կոտրատում դաւադիրների սրերը։ փեսաները դուրս են փախչում, մի մի ապտակ իշեցնելով քաւոր Գորդիզին։ Բայց թանգ արժեցաւ նորան իւր հարսից մի աւելորդ համբոյր քաղելու փորձը՝ դիւցազնուհին բռնցքի հարւածով արիւնում է նորա երեսը։ Դաւիթ բարկացած խնդրում է Աստղծուց գէպք տալ նորան իւր անպատճեան վրէժը առնելու։ Արթնելով հետեւեալ առաւօտ՝ նա տեսնում է խանդութի քաղաքը նորա հօր թշնամիներով պատած։ իբրեւ փեսայ, կռւի նա պէտք է գնայ։ Արդէն երեք օր է, որ Դաւիթ չկայ։ Խանդութ, չհամբերելով, տղամարդի զգեստ է հազնում, զինավառուում եւ գնում Դաւիթի դիակը որոնելու։ պատահելով նորան ճանապարհին, արքայաւդուստը նորան չի ճանաչում եւ կռւի բռնւում։ Հերոսը նորան երիվարից գետին է գլրում, չոքում կրծքի վերայ եւ պատրաստ է արդէն մահացու հարւածը իշեցընել, երբ մի զյգ «սիւտակ ծըծերը», դուրս են պրծնում, եւ Դաւիթ ճանաչում է իւր հարսին։

Դաւիթ կնոջը տանում է Սասուն. Զմեշկիկ Սուլթանը (Ճանապարհը նորա երկրի միջով էր անցնում), տեսնելով նորան պատուհանից, կշտամբում է նորան դաւաճանութեան համար եւ մենամարտութեան հրաւիրում։ Դաւիթ ընդունում է հրաւերը եւ երդում իւր խաչ պատրազով վերադառնալ եօթ օրից յետ։ Բայց անցնում են եօթը տարի, եւ երդ-ման մասին մոռացւում է։

Փ Ո Գ Ի Մ Հ Ե Ր

Դաւթին եղաւ մի որդի՝ Մհերը։

Սորա մանկութիւնը նոյնպիսի դիւցազնական կան կատակներով է զարդարւած, ինչպէս ջոհհարինը պարսից, Վասիլիյ Բուսլայեւինը՝ ուռ-սաց վէպերում։ ում ականջից է քարշում՝ ականջն է հանում, թեւից է քարշում՝ թեւը պոկում։ Ասսունի մեծամեծները գանգատում են Դաւթին, որ նորա որդին քաղաքի բոլոր մատաղ սերունդը բնաջննջ է արել։ բայց ինքն հայրն եւս արդէն անզօր է հանդիսանում իւր որդու կատակներին վերջ գնելու։ Մհերը կռւի է բոնում հօր հետ եւ միայն գաբրիէլ հրեշ-տակը՝ իշնելով երկնից՝ բաժանում է երկուսին։ Դաւիթ անիծում է որդուն եւ խնդրում Աստղ-ծուց նորան սերունդ չտալ։ նեղացած Մհերը հեռանում է Խլաթ։

Դաւիթ նկատում է, որ իւր խաչը աջ թեւի վերայ սեւացել է, իսկոյն յիշում իւր երդման մասին եւ վճռում գնալ Զմեշկիկ Սուլ-

թանի մօտ։ Կուկից առաջ նա լողանում է իւր հակառակորդի պարտիզե շատրւանի մէջ։ Զմբշկիկ դաւաճանաբար հարւածում է նորան պատուհանից հրավառ գութնի խոփով, եւ սպանում։ Խանդութ խաթուն՝ լսելով դաւթի մահը՝ մեռնում է վշտից։

Զէնով Յովան Ցուան, Վէգոյ, ահ կրելով Զմբշկիկի վրէժից, վճռում են կոչել Մհերին Խլաթից։ Յովան փաթաթւում է 7 փաթ գոմշի կաշով, որպէս զի «չտրաքի» եւ իւր դիւցազնական գոչով իմացընում եղբօրորդուն նորա հօր մահւան մասին։ Մհեր, նորա ձայնը առնելով, շտապում է Սասուն եւ աւերում Զմբշկիկի քաղաքները։ Զէնով Յովան որդեգրում է Մհերին¹։

Աստւածաշնչի աւանդութիւնն Յովսէփ գեղեցկի եւ Պենտեփրից կող մասին կրկնւում է եւ այստեղ չնչին տարբերութեամբ։ արտաքսւած տանից Մհերը հօր գերեզմանի վերայ գանգատում է իւր վիճակից։

1 Էստ այլ աւանդութեան՝ Մհեր ծնում է դեռ Խանդութի հօր առնը որպէս նա մեծանում է։ Երբ Խանդութի դաւթի մահը լսելով, նետում է իրան աշտարակի բարձրութիւնից, դաւթի եղբայրները հաւաքւում են նորա լուրջը եւ տեսնում, որ նորա ծծերից կաթ է հոսում։ վճռում են գնալ Խանդութի ծնողների մօտ եւ պահանջել Դաւթի սերունդը։ Մեծ մայրը փակում է Մհերին 7 դաների յետեւը եւ յայտնում Սասունի հերօսներին նորա մահւան մասին։ Զէնով Յովան, չհաւատալով նորան, գործադրում է իւր ահաւոր ձայնը։ Մհեր ջարդում է դաները եւ դուրս դալիս իւր հօրեղբարց մօտ։

Տայ իւերիկ, ինչդ էնիմ
Տայ իւերիկ, ինչդ էնիմ
Սասմայ քեաղքէն բեհբար խանած:¹

Գերեզմանից լսում է դաւթի ձայնը, որ ցոյց է տալիս նորան Հալաբ քաղաքի վերայ: Ճանապարհին հերոսը պատահում է մի սոսկալի պառաւ կնոջ, որ հաց էր թխում. վախելով թե մի գուցէ պառաւը նորան ուտէ, Մհեր պինդ բռնում է նորա ծծերից. պառաւը աղաչում է նորան արձակել եւ խոստանում նորան իւր գըտեր՝ գեղեցիկ գոհար խաթունի ձեռը: Հերոսը պասկւում է գոհարի հետ:

Հալաբի թագաւորը լսում է, որ իւր նշանածին մի անծանօթ կտրիճ է տիրել, եւ մարդ է ուղարկում Սասուն օգնութեան կոչելու այնտեղի փահլեւաններից մէկին: Զէնով Յովան ուղարկում է իւր որդուն՝ Պարոն Աստղիկին, տալով նորան դաւթի զէկերը: Մհեր իւր ազգականի “արեան հոտը” առնում է եւ հրամայում կնոջը փակել բոլոր պատուհաններն եւ դռները, մինչդեռ նա կուելիս կը լինի: Յանկարծ սենեակը վառւում է անսովոր լուսով. Գոհար, չհամբերելով՝ բաց է անում պատուհանը եւ տեսնում:

. . . մէկմ ձին թեւաւուր խեծի,
Վար Մհերկէ գլխիւն կէթայ կուգեայ,
Թուր կ'շարժի վար մատալին,

¹ Արտաքսւած:

Թիւռ բիւռ կրակ թրից կը լքուի վար մատալին,
Մատալից շուռ կառնի գետին,
Կէթայ յանգիւնդք։¹

Գրքի մէջ գոհար կարդում է, որ այս
հերոսը Մհերի հօրեղբայրն է, եւ բարձրա-
ձայն ողջունում նորան. կնոջ ձայնն առնելով,
Մհեր բարկութիւնից նետահար է անում Աստ-
ղիկին, որ աւանդում է հոգին “ըստ Սասունցոց
սովորութեան”, նորա ծնկների վերայ: Հերոսը
ուշաթափ է լինում. թշնամիք կապում են նորան
երկաթէ շղթաներով եւ նետում մի հորի մէջ:
Մհեր դուրս է գալիս այստեղից մի պառաւի
շնորհիւ եւ որդեգրում մի քահանայից: Մինչ
այս մինչ այն Հալաբի թագաւորը դեռ շարու-
նակում է պաշարել գոհարի ամրոցը, որ պաշտ-
պանում է այս դիւցազնուհին: Մհերին տանում
են զինուոր. պատահելով գոհարին կռի մէջ,
նա անցնում է նորա կողմը, կոտորում թա-
գաւորի զօրքերը եւ նստում նորա գահի վերայ:

Մի այլ վարիանտ հետեւեալ կերպով է
նկարագրում Մհերի կոիւը թեւաւոր Աստղիկի
հետ. Մհեր իւր հօր վրէժն է առնում, աւե-
րելով Զմեշկիկի քաղաքները. նոցանից մէկում
նա գտնում է միայն մի ծերունու՝ Փիրմուսին՝
նորա գստեր՝ Դեղձոնի հետ. հերոսը տալիս է
Դեղձոնին իրան ուղեցող հօրեղբօրը՝ խոր Մա-
նուկին, իսկ ինքն պսակւում է մի թագաւորի
գստեր հետ: Արև (գոհար իսաթունը) աստղա-

¹ Կազմ աեղ Եջ 66:

գետ էր. մի որ նա յայտնում է ամուսնուն այն մեծ վտանգի մասին, որ սպառնում է նորա ցեղակիցներից մեկին: Դիւցազնը կնոջ հետ գնում է ծերունի Փիրմուսի մօտ. առաւտեան գալիս է Աստղիկ Երդնկացին եւ կուի բռնւում ՄՇերի հետ, հարւածելով նորան վերեւից. Գոհար՝ տեսնելով իւր ամուսնուննեղւած, բաց է անում իւր “սիւտակ ծծերը” եւ խոստանում Աստղիկին նոցանում հանգիստ առաջան, եթէ նա ինայէ գեռ անփորձ ՄՇերին. Աստղիկ մի ակնթարթ կանգ է առնում, հրապուրւած նորա գեղեցկութեամբ, բայց յանկարծ մահացի հարւած զգալով՝ անշունչ գետին է տարածւում: ՄՇերի հարցին, թէ արդեօք ի՞նչ է Աստղիկի ոխի պատճառը, ծերունին պատասխանում է, որ դեղձոն Աստղիկի նշանածն էր:

Վերջապէս մի երրորդ վարիանտ նկարագրում է այս աստեղամարտն աւելի եւս մանրամասնօրէն: Խոր Մանուկ առեւանգում է Դեղձոնին, Աստղիկի նշանածին, եւ թագցնում նորան մի այրի մէջ: “Աստղը Ճակատին, Հերոսը հետամուտ է լինում նորան մինչեւ ՄՇերի բնակատեղը, որտեղ սա յոյս ունի իրան պատսպարան գտնել: ՄՇեր բարձրանում է տան կոռուրը եւ այնտեղից մենամարտում Աստղիկի հետ, բայց գուրզի ծանր հարւածից ուշամթափ վայր է ընկնում. մահից ազատում է նորան դարձեալ կինը, իւր ժամանակին բաց անելով իւր “սիւտակ ծծերը”: ՄՇեր՝ բարկացած կնոջ անպարկեշտութեան վերայ, երդւում է եօթը տարի նո-

բանից հեռու մնալ եւ՝ հրեղէն ձին հեծած՝ հա-
լածում է Աստղիկին օդի միջով երկի չորս
կողմը. ազատութեան ոչ մի հնար շտեսնելով
Աստղիկ ուղղում է իւր ճանապարհը դարձեալ
դեպի Գոհարի բնակարանը, Նորանից բարե-
խօսութիւն սպասելով. բայց տան շէմքի առջեւ
նորան համում է Մհերը եւ սպանում. ասաղը
դիւցազնի ճակաաից թռչում է:

Անցնում են շատ տարիներ, եւ Գոհար
մեռնում է: Մհեր իւր ձին նստած որսում է,
բայց “ծերացած” հողը նորան արդէն չի կարող
պահել: Նորա խնդրանօք Աստուած բաց է ա-
նում Վանայ քարը, որ եւ իրան մէջն է առնում
դիւցազնին իւր երիվարի հետ:

Այս հոչակաւոր քարի մասին աւանդու-
թիւնն մինչեւ այժմն կենդանի է ժողովրդի մէջ.
Նա այսօր էլ հաւատում է, որ տարին մի ան-
գամ Համբարձման գիշերը բացւում է քարը եւ
բանտարկւած հերոսը կրկին տեսնում է աշխարհ:

Հայ դիւցազնական վէպի պատմական
սերմն:

Արդէն նիւթն իկն ըստ ինքեան ցոյց է
տալիս, թէ ի՞նչ պէսպէս տարրերից են բաղկա-
ցած նորա մասերը. Հայ աւանդութեան ծիլը՝
աճելով՝ խառնուել փաթաթւել է զանազան ազ-
գերի առասպելեաց բողբոջներին. այստեղ պարզ
լսելի է եւ Աստւածաշնչի պատմութեանց եւ
պարսից դիւցազնական վէպի եւ խորհրդաւոր

Արեւելքի հրապուրիչ հեքեաթների արձագանգն։ Այսպիսի բնաւորութիւն են կրում առաջասարակ ամէն մի ազգի բանաւոր աւանդութիւնները. նա հակւած է միշտ իւր լիշողութեան մէջ միացնել այն երեւոյթները, որ դրդած են նորա երեւակայութիւնն, կապ որոնել նոցա մէջ, դրոշմել նոցա վերայ իւր աղդային ոգու կնկքը։

Հոմերոսի վէպերը, ամբողջապէս վեր առած, հազիւ թէ մի ազգի ստեղծական շնորհին կարելի լիներ վերագրել. նոցանում մերթ այստեղ, մերթ այնտեղ մեր ականջին են դիպչում ալեւոր Արեւելքի առասպելները, որ երբեք խզած չէր իւր կուլտուրական կապն իւր հարազատ որդուց հեռաւոր գաղթականութեանց հետ. միայն հելլէն ազգին էր վիճակւած՝ այս թափառական զրոյցներն գեղարուեստօրէն մշակել եւ նոցանից մի գեղեցիկ ամբողջութիւն կազմել։

Պատմութիւնը շփել է Հայերին մի շարք ազգերի հետ, որոնցից ոմանք իրանց դարաւոր հարեւանութեան հետքերը իրոր դրոշմել են նոցա հոգեւոր կեանքի վերայ. Պարսից քաղաքական իշխանութիւնն, որ տարածւում էր ամբողջ Փոքր Ասիյ վերայ եւ հանում մինչեւ կովկասեան ձիւնապատ լեռնաշղթան, անպտուղչակտը է մնար հայ ժողովրդի մտաւոր զարդարման համար, եւ իրօք՝ այս օտար ազդեցութիւնն աչքի է զարկում ոչ միայն մեր լեզում, այլ եւ այն բազմաթիւ աւանդութիւններում, որոնք

անմիջապէս կրում են Իրանի վիպական զրոյց-ների կնիքը:

Միւս կողմից բարելացւոց լայնածաւալ աշխարհայեցողութիւնը, նոցա հոչակաւոր «աստեղագիտութեամբ», հանդերձ, ազգէ ազգ, ցեղէ ցեղ անցնելով, պէտք է գրաւէին ամբողջ հին աշխարհի երեւակայութիւնն։ Քրիստոնէական եկեղեցւոց թափած բոլոր ճիգը՝ խորտակել հեթանոս չաստուծոց, երկնային լուսատուների պաշտամունքն՝ ապարդիւն մնաց նորա դարաւոր կռւում իւր հզօր հակառակորդի հետ։ Ժողովուրդը անգամ մկրտւելուց յետոյ դեռ շարունակում էր հաւատալ եւ այժմ էլ հաւատում է աստղերի բնազդող զօրութեանն, որոնք բաց են անում նորան ապագայի գաղտնիքները, չար օրը, չար տարին յայտնում եւ ուղեկցում նորան մինչեւ գերեզման։ Բեւեռագիր արձանագրութիւններն, որ գտնւած են Հայաստանի սահմաններում (թ. դարից սկսած և. Ք.) եղակացնել են տալիս, որ բարելոնի կուլտուրան դեռնախապատմական ժամանակները հաստաւել էր Փոքր Ասիայում, որտեղից նորան լայն ճանապարհ էր բացւում դեպ ի Արեւմուտք։

Վերջապէս Աստուածաշնչի պատմութիւններն, որ այնչափ տարածւած են Արեւելքում, պէտք է հարուստ պաշտը մատակարարէին հայ ժողովրդի հետաքրքրութեանն։ Նոցա հասարակ ոճը, մատչելի եւ հետաքրքիր բովանդակութիւնն՝ խորը բարոյական իմաստի հետ միացած՝ բնականապէս պէտք է հրապուրէին այն

աղգերի համակրանքն, որոնց մէջ նոքա տարածւում էին, դառնալով այնուհետեւ նոցա հոգեւոր կեանքի գլխաւոր գործօններից մէկը. հազարաւոր տարիներ, նոյն իսկ Նոր կտակարանն անզօր է հանդիսացած քակտել Հնի այն զօրեղ հեղինակութիւնն, որ դարերէ ի վեր կրթել է մարդկային ազնուագոյն ցեղերը:

Մանաւանդ առատ են Ա. Կրոց տւած պառւզներն հայ Հողի վերայ. հազիւ քրիստոնէութիւնն ոտ դրեց Հայաստան, ինչպէս հայ Հոգեւորականութիւնը՝ ժողովրդի կրթութեան գլուխն անցած՝ սկսեց եռանդուն կերպով տարածել նոր սերմն երկրի ցիր-ցան մասերում. քրիստոնէութիւնը դարձաւ այնուհետեւ աղգային միութեան եւ բարգաւաճման հիմնաքարը, զարկ տւեց մայրենի լեզվի եւ պատմագրութեան զարգացմանը, բաց արեց հայ մանկանց առջեւ արեւմտեան գիտութեան գանձարանը: Հին կտակարանը, շնորհիւ իւր վիպական բնաւորութեան, պէտք է առանձնապէս սիրելի ընդունելութիւն գտնէր հայ ժողովրդի մէջ, որ հնուց ի վեր ունէր իւր գիւցազնական աշխարհը. օտար հերոսները, սակաւ առ սակաւ ընտելանալով նորան, պէտք է ի վերջոյ մտնէին նորա աղգային անմահների տաճարը: Ենթադրելու է, որ Աստուածաշունչը դեռ աւելի վաղ ծանօթ էր Հայերին՝ շնորհիւ գերի բերւած Հրէաների, որոնց Հայոց թագաւորները բնակեցնում էին երկրի զանազան մասերում:¹

¹ Ա. Խորենացի Գիրք Բ. գլ. ժթ.: Ա. Կրոց մի

Սանասար եւ բաղդասար: Բնական է որ հայ ժողովուրդը դարերի ընթացքում Ա. Գրոց Սանասարին (= Շարեզեր) հայ գիւցազն է մկրտել, նորանից սերելով Սոսուն գաւառի առունը: Բաւական է երկու աւանդութեանց ամենաթեթեւ համեմատութիւնն անդամ, որպէս զի տեսնել նոցա անկասկած նմանութիւնը. [Ժադաւորաց գրքում կարդում ենք՝

“Եւ ի հասանել գիշերոյն ել հրեշտակ Տեառն, եւ եհար ի բանակէն ասորեստանեայց հարիւր եւ ութունեւ հինգ հազար. եւ կանխեցին ընդ առաւօտն, եւ ահա ամենայն մարմնիք մեռեալ: Եւ չուեաց գնաց, եւ դարձաւ Սենեքերիմ արքայ ասորեստանեայց՝ եւ բընակեցաւ ի Նինուէն (Թագք. Զորը. գլ. ժթ. 35, 36).”¹

Հայ աւանդութիւնն անհամաձայն է իւր օրինակի հետ միայն հայրասպանների նուի եւ սպանութեան ժամանակի նկատմամբ. Հին կտակարանն ապա շարունակում է՝

“Եւ եղեւ մինչդեռ երկիր պագանէր (Սենեքերիմ) ի տան Նեսրաքայ ասսունծոյ իւրում, Ադրամելէք եւ Սարասար որդիք նորահարին զնա սրով, եւ ինքեանք զերծան յերկիրն

Քանի աւանդութիւնները, ինչպէս օր. Ադամի եւ Եւայի, Զէհեղեղի եւ այլն, որոնց հետքերն այժմ պարզապէս գտնում ենք բարելական բեւեւագրերում, [Ժերեւս իորը հնութենում տարածւած էին Փոքր Ասիայում]:

1 Գիրք Սատուածալունչք հին եւ նոր կտակարանաց: Ի Ան. 1860:

Արարատյա.՝¹ մինչդեռ հայ զբոյցն հօր սպանումն (եւ այն եւս էականութիւ յերայ) վերագրում է նորա երկու որդւոց միայն հին, որ զանազան անուններ է կրում՝ Ասլիմելիք, Արամելիք, Բաղդասար եւ այլն. այսպիսով աւանդութիւնս աւելի մերձենում է Պողիհիստորի պատմութեանն, ըստ որում Ասորեստանի տէրը ընկնում է միայն մէկի՝ մի ոմն Արդումազանի ձեռից. նոյն անունն պահպանել է եւ Մ. Խորենացին “Արդամոզան”, պէսպէսութեամբ, որ նոյն գլխում եւս “Ադրամել” է կոչւում:² Հօր անբնական խողլողում որդուց՝ ժողովարդը ճգնում է արդարացնել հայրասպանի քրիստոնէական ոգեւորութեամբ, որի շնորհիւ վերանում է երկրից կոապաշտութիւնն:

Ոչ մի ներքին կապ չունենալով մեր ժողովական վէափի հետ, որ պատմական սերմից է աճել, այս զբոյցն պէտք է այն արւեստական հանգոյցների շարքը դասել, որոնցով ժողովուրդը անգիտակցաբար երբեմն կապում է իւր ազգային աւանդութեանց թելը, հրապուրելով անւանց արտաքին նմանութեամբ։ Սակայն զբոյցն որպանով է հետաքրքական, որ նորանում՝ ըստ

¹ Նոյն աեղ 37: Հմմտ. եւս Ցովբիթ՝

Ա. 24... Եւ ոչ անցին աւուրք = յմօա օչա լլ 1. 21. յիսուն՝ մինչեւ սպանին զնա (զՍե- = ութիծ թէ ու ուշակիմ) երկրին որդիքն իւր, եւ = օժաօ օժա լու օւաչ փախեան նորա ի լըրին Հայոց: — Ճի՞լ լութէ

² Մ. Խոր. Գ. Ա. Գ. Ի. Գ. Բարելական ժամանակագիրը նմանապէս միայն մի թագաւորասպան է ճանաչում, ոչանակելով այս անցքը 681 թ. 20 Տերետ (Ժ. ամիս):

օրինակի հոռվմէական աւանդութեան՝ երկու հարազատ եղբայրներ քաղաքի հիմնադիրք են հանդիսանում. առհասարակ երկու եղբարց արկածները հնումն կազմում էին թափառական աւանդութեանց նիւթ. բաւական է յիշել Ռոմուլոս եւ Ռեմոս, յունաց Գարմոդիոս եւ Արիստոգէտոն, Ագամեմնոն եւ Մենելաոս, Աստուածաշնչի Կայէն եւ Արէլ, գերմանացւոց Բալդուր եւ Հիւդր (Hödhr) եւ այլն. սովորաբար երկու եղբայրներից մէկը շուտով իւր վախճանն է գտնում. (Արէլ, Ռեմոս, Գարմոդիոս, Ագամեմնոն:) Հիւդր կյոր է հանդիսանում. ըստ յունաց աւանդութեան՝ կաստոր եւ Պոլիւդեւքտ, Դիոսկուրի (Dioskuren) փոփոխաբար ապրում էին՝ մէկը երկրիս վերայ արեւի լուսով, միւսը՝ գետնաշխարհի (գժոնիքի) մժութեան մէջ (Ոդիսեւս 11, 303). Նոցա գլխաւոր տօնը կատարւում էր ամառային արեւագարձին: Այս առասպելների սկզբնական հայրենիքը հաւանական է Բաբելոնում որոնել, որտեղից է ծագած արեւի եւ լուսի (Չամաշ եւ Սին) պաշտամոնքն: Կուլտուրայի գեռ ստորին աստիճանի վերայ կանգնած ազգերի երեւակայութիւնն պէտք է հանապազ ազդէին երկրիս այս երկու լուսատուները, որոնցից մէկը անփոփի է իւր մշտնջենաւոր շարժման մէջ, իսկ միւսը՝ տարւայ որոշ ժամանակները նւազում, կորնչում է եւ դարձեալ փայլում երկնակամարում:

Մեծ Մհերի մասին մեր աւանդութիւնները շատ քիչ են հաղորդում, ըստ մեծ մասին

նորա անունն անգամ չէ յիշւում. նորա խղճալի վախճանն աղքատութեան մէջ միանգամայն անհամապատասխան է ժողովրդական հերոսների բնաւորութեանն: Առիւծի կէս անելն այստեղ մեզ մօտ յիշեցնում է Աստւածաշնչի Սամսոնի շահատակութիւնը. Վերջինս եւս պատկանում է Հնուց դիւցազների այն բազմութեանն, որոնք՝ լինելով անբնական ոյժով օժտւած՝ յաղթում են զանազան հրեշների. Իրուստեմ պարսից վեպում սպանում է Սպիտակ Դիեւին, հայոց վահագն, գերմանացւոց Սկաֆրիտը եւ ռուսաց Դօրբինեայ կուռում են վիշապների հետ, Հերակլէս՝ առիւծի հետ, Իզդուբար (Նիմրոդ) ասուրական առասպելում յաղթում է թեւաւոր հրեշին: Այս ալեւոր Հնութեան պատկանող աւանդութիւններն, որ սկզբում բարի եւ չար ոյժերի կոիւն էին արտայատում, ժամանակի ընթացքում հեշտիւ կարող էին ժողովրդի սիրելիների վերայ անցնել: Այսպիսով եւ այս միջադէպը միանգամայն օտար սերմ է մեր բուն դիւցազնական աւանդութեանց շարքում:

Դաւթի աւանդութեանց ծագումը. հերոսի բուն հայրենիքն, անձնաւորութիւնն եւ անունն. նորա բարոյական տիպարը:

Հայ դիւցազնական վեպը իսկապէս հանդէս է գալիս Դաւիթ Սասունցու աւանդութիւններում, որոնցում տպաւորւել է հայ ժո-

զովրդի պատմական վիճակն Արաբացւոց արշաւանքի ժամանակ, խորը դրոշմել այն դարաւոր ազգային կոհել, որ ի վերջո ի գահ բարձրացրեց Բագրատունեաց Հարստութիւնն (885թ.): Այս անցքերը, որ ժողովրդի աչքում քրիստոնէութեան անհաւաների վերայ տարած յազմանակն էին նշանակում, պէտք է անշնչելի ապրէին նորա յիշոյութեան մէջ, շարժէին նորա երեւակայութիւնն, գործունէութեան հրաւիրէին նորա ստեղծական ոգին: Թէ կուի առանձին միջադէպերը եւ թէ ինքեանք գործող անձինք հարկաւ կարող էին ժամանակի ընթացքում խառնւել, շփոթւել միմեանց հետ, բայց այն պատմական ծիլը, որից ծաղկել է հայ դիւցաղնական վէպը, միանգամայն պարզ պահպանել է նորանում իւր բնաւորութիւնն եւ բարձր նշանակութիւնն:

Արաբացիք Հայաստան մտան 638թ., գրեթէ ոչ մի խոչնդոտի չհանդիպելով այնտեղ: Արշակունեաց Հարստութեան անկումից յետոյ (428) Հայաստանը ծառայութեան էր մտած մասամբ Յունաց, մասամբ Պարսից, թէպէտ եւ երկիրը որոշ չափով պահպանած էր իւր անկախութիւնը նախարարների իշխանութեան տակ: Նորեկները գտան երկիրը աւելի եւս թուլացած իշխանների փոխադարձ թշնամութեամբ եւ երկպառակութեամբ. արդէն 640թ. Արաբացիք հասնում են մինչեւ Արարատեան գաւառը, աւերում դուին քաղաքը եւ 35.000 բնակիչ գերի տանում դամասկոս: Միակ օգնութիւնն,

որի վերայ Հայերը յոյս ունէին, Բիւզանդիոն էր, բայց սա ինքն հազիւ կարողանում էր իւր սահմանները մահմետականաց հրոսակների դէմ պաշտպանել. Հերակլ կայսրը արդէն ստիպւած եղաւ հրաժարւել Պաղեստինից, կոչելով այնտեղից յունական զօքքերը. ապա ինքն մայրաքաղաքը պաշարեցաւ 668թ. եւ կրկին աւելի եւս սաստիկ 717թ.: Առաւելութիւնը յայտնապէս իսլամի կողմն էր, որի յաղթող սրի տակ կարճ միջոցում իւր գլուխը խոնարհեց ամբողջ գոռող Արեւելքը:

Նոր կրնը պահանջում էր իրան տարածել սրով եւ հրով. այստեղ լիովին ցցց տւեց իրան արեւելեան բարբարոսների իշխանութիւնը յաղթածների վերայ. մեր միջնադարեան պատմագրերի տեղեկութիւններն լի են սոսկալի հայածանաց նկարագրութիւններով, որ յարուցանում էին երկրում ամիրագետի հաւատարիմ ծառանները. սոքա իրանց բոլոր ճիգը թափում էին նորա վերայ, որ տեղական իշխաններին մէկ մէկ որսալ կարողանան եւ արդէն իրանց պետք դրանը մերթ խոստումներով եւ մերթ սպառնալիքով ստիպեն նոցա ընդունել իսլամ: Զինայեցաւ նոյն իսկ հոգեւորականութիւնն, որ՝ հակառակ աշխարհական իշխանաց՝ մարտիրոսական մահը գերադասում էր ոգու ամօթալի ստրկութեանն. եկեղեցիները իրանց զարդարանքից մերկացան, խաչերը գմբէթներից վերցնել տւին, սուրբ անօթները վաճառւեցին. քահանաներին հրամայւած էր մօրումները գերծել եւ ի նշան

ստրկութեան կապարեայ կնիքներ կրել պարա-
նոցի վերայ:

Արաբացոց ոստիկանների միւս հոգսը նո-
րանումն էր, որ ըստ Հնարաւորութեան հարուստ
հարկ ուղարկեն իրանց պետերին նոցա ողորմած
ուշադրութեանն արժանանալու համար. քայ-
քայւած երկիրը շատ անգամ անկարող էր լի-
նում տանել այս ծանր բեռը, եւ մերթ այստեղ,
մերթ այնտեղ ծագում էին ապստամբութիւն-
ներ, որ արեան հեղեղատով էին ճնշւում:

Այս անհաւասար կոիւը մանաւանդ սուր
կերպարանք ստացաւ Վասպուրականում եւ
Տուրուբերանում, որտեղ թ. դարում տեղական
իշխաններն արիաբար շարունակում էին իրանց
իրաւունքները պաշտպանել եւ որի անառիկ տե-
ղերում: 848 թ. այստեղ է գալիս Զաֆար ալ-
-Մուտավակիլ (յԱստուած յուսացող 847 —
861) ամիրապետի անունից մի ոմն Ապուսէթ
զօրքի մեծ բազմութեամբ հարկ առնելու պա-
տրուակով, բայց յայտնապէս դիտաւորութիւն
ունենալով այստեղ հաստատել իւր իշխանու-
թիւնն: Ստանալով իւր հարկն եւ տեսնելով
Աշոտ Արծրունու եւ Բագրատ Բագրատունու
իշխանաց բարեկամութիւնն, Ապուսէթ չվստա-
հացաւ բացարձակ գործել, այլ վերադարձաւ
Բաղդադ, յանձնելով իւր իշխանութիւնը Մու-
սէին (850 թ.). սորանից գեռ առաջ նորա
հրամանով Ալայ (կամ Ովայ) հազարապետը
մոտաւ Վասպուրական եւ սկսեց աւերել երկիրը.
ի զուր Վասպուրականի տէր Աշոտ Արծրունին

յորդորում էր նորան առնել իւր հարկը եւ
հեռանալ երկրից. տեսնելով Ալայի յամառու-
թիւնը, նա յարձակւեցաւ վերան եւ կոտորեց
նորա զօքքը. ազատւեցաւ միայն առաջնորդը
քչերով։ Հետեւեալ ընդհարումն Արարացոց
հետ տեղի ունեցաւ Աղձնիքում (այս գաւառին
էր պատկանում Սասունը). Մուսէն յանկար-
ծակի մանում է Տարօն, Բագրատ Բագրատունու-
երկիրը, մտածելով վերջնական հարւած հաս-
ցնել անհնազանդ բնակիչներին. Աշոտ, ստանա-
լով այս նոր գոյքը Բագրատուից, շտափում է
նորան օգնութեան, եւ միացած հայ զօքքերը
չարաչար սրի են մատնում թշնամու գունդը։
Արարացիք մի առ ժամանակ արտաքսեցին
երկրից, բայց թուլասիրտ իշխաններից ոմանք,
երկնչելով խալիֆի վրեժից, շտափեցին բոլոր
մեղաւորութիւնն Աշոտի վերայ բառնալ. նոցա-
նից մէկը, Վասակ Արծրունին, երկիւղ կրելով
իւր գանձերի համար, որ իւր տան գետնափո-
րում էր թագցրած, անձամբ եկաւ ջաֆարի
մօտ եւ ուրացութեամբ փրկեց իւր կեանքը եւ
գոյքը¹. Զայրացած խալիֆը նոր զօքք ուղարկեց
իւսուֆի (Ապուսէթի որդու) առաջնորդու-
թեամբ, հրամայելով նորան բռնել Աշոտին եւ
կապանքների մէջ բերել նորան իւր մօտ։ Իւ-
սուֆ, ըստ օրինակի իւր նախորդաց, սկսեց աս-
պատակել երկիրը. բայց տեսնելով, որ իշխան-
ները գուրս չեն գալիս իրանց ամրոցներից, դի-

¹ Թօվմաս Արծրունի, Դպր. Երկ. Գլ. 2, էլ 113։

մեց խորամանկութեան, բարեկամական դիմակի տակ հրաւիրելով իւր մօտ Բագրատ Բագրատունուն՝ նորան իւր իշխանութիւնն յանձնելու պատրուակով։ ամենեւին կասկած չտանելով դարանի մասին՝ Տարօնի իշխանը շտապեց Խալթ, որտեղ իւսուփ նորան ձերբակալեց եւ երկաթեայ կապանքների մէջ ուղարկեց Բաղդադ, իսկ ինքն միւս պատանդների հետ գնաց Մուշ ձմերելու։ Այն ժամանակ Խութի լեռնականք, տեսնելով, որ իրանց իշխանը գերւած է, գարնան սկզբին վայր իջան իրանց լեռներից Յովլանի առաջնորդութեամբ, շրջապատեցին քաղաքը եւ կոտորեցին այնտեղ նստած արաբական հրոսակները. իւսուփ փախչում պահւում է Փրկչի եկեղեցու գմբէթի մէջ, բայց նորան գտնում են այնտեղ եւ աշտէով շամփուրում. “Եւ ես աչօք իմովք տեսի զայրն զայն, որ Հարեալն էր զնա, եւ ինմանէ ստուգեցի վասն նորան, աւելացնում է մեր պատմագիրը¹:

Այսպիսի յանդուգն դատաստանն իւր ծառայի հետ Հարկաւ չէր կարող ներել ուղղափառաց պետը, եւ հազիւ նորա ականջին հասաւ Արաբացոց լեռնականներից պարտութեան լուրը, ինչպէսնա հրամայեց զօրք գումարել իւր ընդարձակ տէրութեան բոլոր մասերից եւ այս ահաւոր բազմութեան հեղեղատը ուղղեց Հայաստանի վերայ (853թ.). զօրքի հրամանատար նշանակւ եցաւ ջաֆարի ամենամօտ սիրելին՝ Ղարայ

¹ Նոյնաեղ, ԳԼ. Է., Էջ 120:

Բուղայ - էս - Շարապի, որին է պարտական Հայաստանը իւր պատմութեան ամենաարինալի էջերով։ Կարճ միջոցում բոլոր հայ գաւառները հեղեղեցան արաբական հրոսակներից, որոնք հասան մինչեւ Տիգիս եւ առան քաղաքը առանց կուի։ Աշոտ Արծրունին, վտանգի մօտենալը տեսնելով, ամենալաւը համարեց փակել իւր դղեակ ամրոցում, բայց, դաւաճանւած իշխաններից, ինքնակամ անձնատուր եղաւ Բուղային։ Արաբական զօրապետը ուղարկեց գերի հայ իշխաններին Զաֆարին, որ հրամայեց նոյս բանտ գնել։ Աշոտին հետեւեց նորա եղայրը՝ քաջարի գուրգ էնը, որին միայն գաւով կարողացաւ բոնել թշնամին։ Ընդհանուր վիճակից ազատ մնաց միայն Բագրատ Բագրատունին, առ երեսս ընդունելով իսլամ, եւ Վասակ Արծրունին, որ գեռ սրանից առաջ ուրացած էր իւր հայրերի հաւատը։ Մարտիրոսական պսակը չյապաղեց զարդարել քաջաց քաջի՝ լեռնական Յովսանի գլուխը, որ չարաչար մահւամբ խալիֆի դրանը անմահացրեց իւր անունը ժողովրդի մէջ։

Այս ընդհանուր սուգի ժամանակ հանդէս եկաւ մի նոր անձնաւորութիւն, որ կրկին բարձրացրեց ժողովրդի վհատած ոգին եւ սարսափ տարածեց Արաբացոց վերայ. դա գուրգ գէնն էր, Ապուպելձ Արծրունու որդին։ Մի շաբթ փայլուն յաղթութիւններով նա մաքրեց երկիրը թշնամուց եւ այնպիսի հոչակ ստացաւ, որ ըստ մեր պատմագրի ինքն Բուղան ուղարկեց նորան ի պարգեւ՝ նորա քաջութեան համար՝

“Առւսեր իշխանական ընդ մէջ արկեալ եւ գօտի արիական շըջապատեալ զմիջաւ, քուքք (մարակ) խիզախողք եւ երիվար բարձրավեց, ոտնատորոփի խրոխտալիք, յարմարական առ ընթացս պատերազմական։ Եւ կացոյց զնա իշխան յիւրում հաւատարիմ տեղւոջ...¹, Հերոսի բարձր համբաւը գերեց Անձաւացեաց տիկնոջ Հեղինէի սիրտը, որը իւր ամուսնու մահց յետ, ըստ օրինակի ժողովրդական վէպի հերոսուհու, յայտնում է իւր սէրը քաջին։ “Եթէ հաճյ թուիցին քեզ կնութեան եւ կամիցիս քեզ զտիրելն Անձաւացեաց, գրում է նա նորան, մի վեհերեալ յապաղելով դանտաղկոտ լինիր եւ վերջանար զիութալն։² Գուրգէն շտապեց տիկնոջ կոչեն եւ տիրեց նորա երկրին։ Ամբողջ Վասպուրականը մի առժամանակ մնում է նորա ձեռքի տակ մինչեւ հայիշխանաց վերադարձ գերութիւնից (862թ.)։ Խրկիրը վերջապէս խաղաղացաւ երկար յուզմունքներից յետոյ, երբ 885ին Անիում թագաւոր օծւեցաւ իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին, որին ինքն Ահմեդ ալ-Մուտամիդ խալիֆը (870—892) պարգեւեց արքայական թագ եւ հանդերձ։

Ահաւասիկ այն պատմական հողը, որի վերայ են աճել Դաւթի աւանդութիւններն։ Խառն ի խուռն անցքերը, որ կատաղի փոթորկի նման Հայոց երկրի վերայով անցան, պէտք է

¹ Նոյնաել գոր. Գ. Գև. Ժ. Ֆ. Էջ. 198։

² Նոյնաել գև. Ժ. Ֆ. Էջ. 209։

ամբողջ սերնդների յիշողութեան մէջ վառ
մնային։ Երկու եւ կէս դար տեւող կոհւը
միանգամայն ազգային էր, այսինքն՝ ոչ միայն
քաղաքական, այլ եւ կրօնական, եւ այս հան-
գամանքն ժողովուրդն առաւելապէս շեշտում է
իւր տեսած - ապրած օրերի յիշատակարա-
նում։ Նորա հերոսը գործում է իւր շահատա-
կութիւններն սխաչ պատրազին, զօրութեամբ,
որ միշտ կրում է աջ թեւի վերայ. «անհաւատ-
ներից, աւերած Ս. Աստածածնայ վանքը նա
նորոգում է մի քանի անգամ։ Սասունի դիւց-
ազանց բանակին համապատասխանում է հա-
րաւային իշխանաց խումբը, որոնց առջեւ շատ
անգամ թիկոնք էին դարձրած արարական
հրոսակները։ Վէպիս մի քանի հերոսներին դժար
չէ մեզ յայտնի պատմական անձնաւորութիւն-
ներում ճանաչել. Ցուան վէգոն, որ թշնամուն
տեսնելիս հրամայում է փակել քաղաքի
դռները եւ ինքն փախչում տան մէջ պահում
(որի համար եւ ստացել է իւր մականուն),
հաւատուրաց Վասակ Արծրունու կատարեալ
տիպարն է, որ հարկաւ ատելի պէտք է լինէր
ժողովրդի մէջ։ Ինքն մեր պատմագիրը չէ թագ-
ցնում իւր դարշանքը դէպի այս դաւաճան իշ-
խանն՝ «... եւ զի մի երկայնեալ որ ինչ վասն
սորա (Վասակայ) ապիրատ եւ ինքնակամ եւ
անզիղ եւ անինդ առանց պատկառ անաց մո-
լորութիւն սորա լի անամօթութեամբ՝ ի բաց
դիցուք զսակ միջոց յիշատակինախարարացն...»,¹

¹ ԳԼ. Զ. Էջ 158.

Հակառակ սորան լեռնացի Յովնանը, որ
բնաջնջ էր արել արաբական հրոսակը եւ
դորա համար մարտիրոսական մահով նահա-
տակւել Խալիֆի դրանը, պէտք է ժողովրդի
սիրելին դառնար¹. Նորա յիշատակը դիւրին է
վէպիս Զէնով Յովնանի անձնաւորութեան մէջ
պարել, որ շատ զըսցներում աշակցում է իւր
“եղբօրորդին” Դաւթին կոտորել թշնամուն: Թէ
ժողովուրդը կամեցել է նորան արիւնակից շինել
գլխաւոր հերոսի հետ՝ դա շատ բնական է.
Սասունի քաշերը կազմւմ են 乃 աղբապահմ:
Բայց ինչպէս դեռ կը տեսնենք, այստեղ այլ
եւս հիմք կարող էր լինել ազգակցութեան հա-
մար: Սասունի հերոսներից ոմանք գուցէ թագ-
ցնում են իրանց մականւանց տակ պատմական
անձինք, որոնք ըստ իրանց բարոյական եւ մար-
մական յատկութեանց ժողովրդից այլ այլ
անուններով են մկրտւած: “Ծուռ,” մականունն,
որ կրում է այս ամբողջ սերունդն, բնորոշում է
ոչ միայն երկրի պատերազմասէր իշխաններին,
այլ առաւել եւս բնակիչներին, որ մինչեւ մեր
օրերը պահպանել են իրանց յամառ բնաւորու-
թիւնն եւ ազատ, կտրիճ ոգին, միացած յաղ-
թանդամ արտաքին տեսքի հետ:

Բայց նոցանից ոչ մէկում այն աստիճան
չէ տպաւորւել ժամանակն եւ ժողովրդի ոգին,

¹ “Եր ընդ գերեաւան ի լեռնէն Խութայ Յովնան
անուն առ այն է, որ մինչ ելանելն Բուխարի ի սկզբանն
մտանելոյ նորա ի Հայո՝ եկաց ընդդէմ նորա բնակչօք լե-
րինն եւ հարուածն մեծամեծն հասոյց ի վերայ զօրացն
արքունի ։ Պ. Գլ. ՃԱ. Էջ 188:

ինչպէս Դաւթի անձնաւորութեան մէջ. նա երկիւղած է, մեծահոգի, անշահասէր, արդար, նեղեաների պաշտպան՝ յատկութիւններ, որ ժողովրդի աչքում ամենաբարձր գնահատութիւնն ունեն: Նորա վերայ է կենդրոնացած վէպիս բոլոր գործողութիւնն, նա է սկսում եւ վերջացնում “անհաւատ”, Մսրամելիքի հետ կոիւը: Աշոտ Արծրունու նման նա երիւ անգամ արտաքսում է երկրից հարկահան կուզբադինին (որ հաւանօրէն ծաղրանուն է իւղ = սապատող եւ արաբը. Ն Ճ կ բադին = պարտար բառերից կազմած) եւ սպանում նորա մարդկանց: Մսրամելիքի մահը, որ ընկնում է հերոսի ձեռքից, պէտք է ժողովրդին յիշեցնէին այն ուրախալի օրը, երբ անգութ իւսուֆը շամփրեցաւ խութի լեռնականներից:

Նմանապէս Դաւթի վերայ կարող էին անցնել Գուրգէն Արծրունու մի քանի շահատակութիւնները, որ իրօք արժանի նիւթ էին մատակարարում ժողովրդական վէպի համար: Երկու հերոսների կենաց մի քանի մանրամասնութիւնները մեզ հիմք են տալիս նոցա անձնաւորութիւններն ձուլելու.

ա. Դաւթիթ ինչ ինչ աւանդութիւններում “Պլեճների տղայ, է կոչւում, որ նմանութիւն է բերում Գուրգէնի հօր “Ապու-պելճ”, անաւն¹.

բ. Գուրգէնի ամուսնութիւնն Անձաւացեաց տիկնոջ հետ իւր սիրահարական մանրա-

¹ Գուրգէն որդի Ապուպելճի Ասսպուրական իւնանի, գլ. ԺԳ, էջ 194:

մասնութեամբ՝ մօտ յիշեցնում դաւթի եւ
խանդութ խաթունի պսակը:

գ. Արաբական զօրապետից Գուրգէնին
պարգեւած զէնքերը բառացի համապատասխա-
նում են դաւթի հայրական “թուր կէծակին,
ոսկի քեամարին եւ քուռկիկ ջալադին”:

Գուրգէն Արծրունու հերոսագոյնծութիւն-
ները գուցէ դեռ նորա կենաց ժամանակ կաղ-
մում էին ժողովրդական երգերի նիւթ, որոնց
մէջ է պարելու դաւթի աւանդութեանց
սկզբնական սերմը: Բնականաբար Գուրգէն-
դաւթի վերայ ժամանակի ընթացքում կարող
էին եւ Աշոտ Արծրունու, անգամ խութեցի
Յովնանի շահատակութիւններն կուտակւել. այս
տեսակէտից դաւթի անձնաւորութիւնն հաւա-
տէան պէտք է Համարել, որի մէջ է մարմնացել
սրբազն կուրի գաղափարը յանուն հոգեւոր
եւ մարմնաւոր ազատութեան:

Այսպիսի մի հոչակաւոր հերոս, որ հարց-
տահարւածների պաշտպան է հանդիսանում եւ
սրի մի հարւածով գետին տապալում հսկայ
Մորամելիքին, ժողովրդին իսկապէս Դաւէնի պէտք
է թւար, որ սպանում է սոսկալի Գողիաթին:
Համեմատութիւնն շատ հրապուրիչ էր, եւ այս
անունն ժողովուրդը ընդ միշտ իւր սիրելի գիւց-
ազնին է յատկացրել: Բայց նա միեւնոյն ժա-
մանակ լաւ յիշում էր, որ Աստւածաշնչի
դաւիթը, նախ քան թագաւոր օծւելն, իւր հօր
հօտն էր արածում եւ զանազան գաղանների
հետ մենամարտում.

“Եւ Դաւիթ գնացեալ (ընդ եղբարս իւր) դարձաւ ի Սաւուղայ արածել զոչսարս հօր իւրց ի Բեթղահէմ...”

“Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. Արածէր ծառայ քո զնաշինս հօր իւրց, եւ յորժամ գայր առիւծ կամ արջ եւ առնոյր ոչխար ի հօտէ անտի, ելանէի զշետ նորա եւ հարկանէի զնա, կորզէր ի բերանոյ նորա. եւ եթէ յառնէր ի վերայ իմ, ունէի զփողից նորա եւ հարկանէի եւ սպանանէի զնա:¹

Այս միջադէպը հայ ժողովուրդը վերին աստիճանի հետաքրքիր կերպով է մշակել. արդարացնելու համար “ծուռ”, անունն, որ նա իւր հերոսին է տալիս, նա ստիպում է երիտասարդ հովիւին բերել հօտի հետ խառնել առիւծներ, արջեր եւ այլ գազաններ, որոնք հնազանդ են նորա գաւազանին: Նմանապէս դեւերի եւ աւազակների հետ կոխւը նոյն աղբիւրին է վերագրելու:

Ըստ երեւութին, նոյն հողի վերայ է հաստատուել Դաւիթի եւ Զէնով Յովանի ազգակցութիւնն. Հին կտակարանի տեղեկութիւնն արքայորդի Յովանուանի սիրոյ մասին առ Դաւիթ (“Եւ ոդի Յովանաթանու կապեցաւ ընդ ոդւոյն Դաւիթի, եւ սիրեաց զնա Յովանաթան ըստ անձին իւրում, Թագ. Ա. գլ. ժը. 1) եւ վերջինիս ազգականանալն նորա հետ արդէն բաւական հիմք են տւել ժողովրդին մեր վէպի երկու հերոսին եւս միմեանց արիւնակից Ճանաչելու:

¹ Թագ. Ա. գլ. ժը. 15, 34, 35.

Բայց մեր ժողովրդական Յովանն “ձէնով” է կոչւում։ առասպելական միժին մեկնութիւններն հազիւ թէ իրաւամբ այստեղ իրանց տեղ գտնել կարողանային։ այս տարօրինակ յատկութիւնն բնական է վերագրել լեռնականաց, որոնք յաճախ ստիպւած են լինում հեռաւոր տարածութեան վերայ միմեանց հետ խօսելու եւ որոնց ձայնին բոմբիւնն “իբրեւ ի վիմաց ինչ արձագան լինելը կարծիս բերէ” . . .¹։ Զափազանցութիւններն անխուսափելի են, երբ պատմական զըսցն՝ զարդանալով՝ հետզհետէ վիպական բնաւորութիւն է ստանում։

Հերոսի մենամարտն իւր նշանածի հետ ծանօթ նիւթ է եւ ուռւաց ժողովրդական վէպին։ Դունայ (Դանուբ) դիւցազնն գնում է լիտաւացցոց թագաւորի մօն՝ նորա գստեր ձեռքը իշխան Վլադիմիրի համար ուզելու։ Ստանալով հօր համաձայնութիւնն, նա հարսի հետ վերադառնում է Կիյեւ։ Ճանապարհին նոցա յետեւից է համում մի անծանօթ կտրիճ, որի հետ դունայ կուի է բռնւում եւ ձիուց գետին գլորում։ արդէն նա պատրաստ է մահացու հարւածն իջեցնել, երբ յանկարծ դուրս են ցատկում զգեստի տակից մի զոյգ “սպիտակ ծըծեր”, եւ հերոսը իսկոյն ճանաչում է հարսի քրոջն, որի հետ նա պսակւում է։ — Գերմանական վէպի դիւցազնուհին, արքայադուստր Բրիւնհիլտան, որի սէրն է գրաւում Սիդքրիդ՝ անցնելով հրավառ պատնէշից, նմանապէս պատկանում է այս

¹ Տե՛ս մեր “Յառաջաբանն”։

կորիճ կանացի տիպարին, որ յաճախ հանդէս է գալիս արեւելեան զըսյներում:

Այստեղ հետաքրագոյնն այն է, որ Յունաց Յովհաննէս Զմեշկիկ կայսրն (969—976) իրեւ կինարմատ է հանդէս գալիս, շարունակելով կրել իւր “սուլթան” տիտղոսն: Թէ կայսեր անունն ժողովրդականութիւն էր վայելում Արեւելքում՝ վերագրելու է թէ նորածննդատեղին (Հայաստանում) եւ թէ նորաարաբական արշաւանքին, որ փառաւոր յաղթութեամբ պսակւեցաւ. ըստ վկայութեան Մատթէոս Ուռհայեցու՝ Զմեշկիկ անցնում է Տարօնի միջով եւ իջեւանում Մոռշ քաղաքում, որտեղ “սիրոյ ուխտ”, հաստատելով չայերի հետ՝ Աշոտթագաւորից օգութիւն է ստանում¹: Բայց Զմեշկիկ մեր ժողովրդական վէպում դաւթի “նշանաձն”, է կոչւում, որին հերոսը դաւաճանում է. այս տարօրինակ կերպարանափոխութիւնն հիմնւած պէտք է լինի այն աւանդութեան վերայ, որ կայսեր մասին պտըտում էր Արեւելքում. ըստ նոյն պատմագրի՝ Զմեշկիկ գալիս պաշարում է Ամիդ (Տիգրանակերտ) քաղաքը. “իսկ տէրն Ամիդայ քաղաքին կին էր, որ էր քոյր չամոննոյ ամիրային Տաճկաց: Եւ յառաջ ժամանակաց թագաւորն խառնակեալ էր ընդ նմամեղօք, եւ վասն այնորիկ չարար հնարս առնելոյ զքաղաքն Ամիդ . . . եւ թողեալ զԱմիթ վասն կնոյն իւր. եւ վասն զի Զմեշկիկ ի գաւառէն

¹ Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ. Երուսաղէմ, 1869, էջ 21:

Խոզնայ էր, ի տեղւոյն, որ այժմ կոչի Չմշկածագք, եւ կինն ի նմին սահմանացն էր ու¹ իւր հերոսի մահն հիմնարելու համար, որ ընկնում է իւր դաւաճանութեան համար Չմշկիկ Սուլթանի ձեռքից, ժողովուրդն անգիտակցաբար փոխադրել է վերսիշեալ աւանդութիւնն Դաւթի վերայ, կայսեր անունն տալով նորա սիրություն:

Գութնավարի հետ միջադէպը տեղի ունի եւ ուսաց դիւցազնական վեպում. միայն այստեղ հերոսն ինքն գութնի տէրն է հանդիսանում: Ոչ իշխան Վոլգան եւ ոչ նորա կտրիճները չեն կարող գութանն հողից հանել. իսկ նորա տէրն մի ձեռքով է վերցընում նորան եւ դնում ճանապարհի մի կողմը: Կինկիննատին հոռվմէական պատգամաւորները գտնում են գութանն անձամք քարշելիս, երբ գալիս են նորամօտ՝ թշնամեաց դէմ նորան առաջնորդ ընտրելու:

Իրանի հերոսների մասին աւանդութիւնները դեռ հնում պէտք է ծանօթ լինէին Հայերին. այս հանգամանքի վերայ գոնէ մատնացոյց է անում խորենացու մի նկատողութիւնն, որով նա երիտասարդ իշխան Սահակ Բագրատունուն է դիմում. «Եթէ կամիս, ստեմ եւ ես յաղագս նորա (Տողքի)` անյաջ եւ փցուն, որպէս Պարսիկք վասն Ռոստոմայ Սագճըկի՝ հարեւը եւ քսան փղոց ոյժ ասեն ունել^{ու}:² Պարսից հերոս-

¹ Նշնտեղ, էջ 22-23:

² Խորենացի Գերբեք Բ. 42. Ը.:

Ներից ոմանք, ինչպէս Ռուստամ, պէտք է հրապուրէին հայ ժողովրդի համակրանքն ոչ միայն իրանց մարմական, այլ եւ բարոյական յատկութեանց շնորհիւ, պատրաստի օրինակ ծառայելով նորա նորագոյն սիրելների համար։ Հայ դիւցազնի վերայ անտարակոյս անցել են հոչչակաւոր պարսից հերոսի մի քանի սովորութիւններն։ Նոքա երկուան եւս

ա. շատակեր են,

բ. սիրում են որսորդութիւն,

տ. թշնամուն կէս են անում,

դ. ծառն արմատից հանում եւ այլն.

Ռուստամի կենաց մի քանի միջադէպերը ժողովուրդն ուղղակի իւր վէպն է փոխադրել.

ա. Դաւիթ, Ռուստամի պէս, կռւի է բռնւում իւր որդու հետ։

բ. Երկու հերոսն էլ ընկնում են թշնամուց պատրաստած հորի մէջ։ Ռուստամ այստեղ իւր վախճանն է գտնում¹, մինչդեռ Դաւիթ իւր “Խաչ Պատրազի” զօրութեամբ կրկին դուրս գալիս լցոս աշխարհ։

Վերջապէս, երկու դիւցազն էլ ունեն իրանց իմաստուն նժոյգներն (Ռախչ, Զալալ), որոնք յաճախ զգուշացնում են իրանց տէրերին թշնամու դարանից։

Բայց ի նկատի առնելով իրանական վէպի լայն հոչչակն, հեշտիւ կարելի է չափազանցութեան մէջ մոլորել։ Որչափ էլ զօրեղ լինի ազ-

¹ Տես իմ “Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ”։

գերի փոխադարձ կուլտուրական ազդեցութիւնն,
վերջինս, յայտնի պայմաններում, որոշ սահ-
մաններից չէ անցնում. ամէն մի ազգ ունի իւր
աշխարհայեցողութիւնն, իւր մտածելու եղա-
նակն, իւր ստեղծող ոգին: Վերոյիշեալ պարսից
ազդեցութիւնն ընդհանրապէս զգալի է
միայն արտաքին մանրամասնութիւններում եւ
կամ պատահական միջադէպերում, որ դարերէ
ի վեր կուտակւել են մեզանում: Զպէտք է մո-
ռանալ, որ

• Հայ դիւցազնական վէպն ըստ իւր էա-
կանութեան պարագան հողի վերայ է աճել եւ
զարգացել.

բ. Սասունի քաջարի կոիւն եկւոր թշնա-
միների հետ կազմում է այս աւանդութեանց
գլխաւոր հանգսցն եւ ամբողջացընում նոցա.

գ. Վերջապէս, վէպիս գլխաւոր հերոսն՝
Դաւիթ Սասունցին՝ միանդամայն տարբեր յատ-
կութիւններով է հանդէս գալիս. նորա յամառ,
“ծուռ” բնաւորութիւնն, բարեպաշտութիւնն,
անձնուեր, կտրիթ ոգին պատկանում են այն ժո-
ղովրդական շրջանին, որի մէջ է ծնել նորա դիւ-
ցազնական տիպարն. նա երեւակայութեան ար-
դիւնք չէ եւ ոչ էլ առասպելական հերոս, այլ
իրական, կենդանի պատկեր, որ դիւցազանց շարքն
է մտած: Նորա ամբողջ անձնաւորութիւնն այն
աստիճան ձուլել է ժողովրդի հետ, որ ամենայն
իրաւամբ նորան է պատկանում հայ ազգային
հերոսի համբաւն:

Մհերի առասպելն:

Շատ աղքատ են մեր տեղեկութիւններն Հայոց հնագոյն առասպելաբանութեան մասին . ոչ միայն ժամանակն, այլ եւ եկեղեցու նախանձախնդիր պաշտօնեայք աշխատել են բնաջինջ առնել ժողովրդի մեջ հեթանոսութեան այս մնացորդն: Օրինակն մեր աչքի առջեւ է. մեր բարեպաշտ պատմագիրն չէ թագցընում իւր ատելութիւնն դէպի հեթանոս «փծուն եւ անձոռնի», աւանդութիւններն, այլ միայն իւր երիտասարդ մեկենասի կամքն կատարելով, ակամայ յիշում է Բիւրասպ Աժդահակի առասպելն . «զորոց ատեմք զբանս եւ զդործս, եւ այնոցիկ մանաւանդ թէ լուրն զլսելիս մեր տաղտկացուցանէր, այսօր ձեռամբ իմով շարագրեմ զայնոսիկն,¹ ասում է Խորենացին, իբրեւ մի ծանր լուծ վերան առնելով: Սակայն ինքն ժողովուրդն հեռու էր այս տեսակէտից եւ ախորժելով ականջ էր դնում իւր գուսանաց երգերին: Մ+ Խորենացու յիշած զըսցներն ըստ մեծ մասին հատուկտոր են, անկապ եւ շատ անգամ մժութեամբ քողարկւած: Նոցանից եւ ոչ մէկում չենք գտնում մեր դիւցազնի անունն. սակայն պահպանել է մի աւանդութիւն, որ մեզ համար մեծ հետաքրքրութիւն է ներկայացընում: Արտաշէսի մահից յետ, որ ժողովրդից շատ սիրւած էր, թագաւորում է նորա որդի Ար-

1 Մ+ Խորենացին «ի պարսից առասպելեաց» Ա. Դրբերջում:

տաւազդը, այս առթիւ գողթան գաւառի երգիչք դեռ Խորենացուժամանակ հետեւեալն էին աւանդում. “ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց, դժուարի, ասեն, Արտաւազդ՝ ասելով ցհայքն. Մինչ դու գնացեր, եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս որպէս թագաւորեմ։ Վասն որոյ անիծեալ զնա Արտաշիսի՝ ասաց այսպէս. եթէ դու յորս հեծցիս յազատ ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յազատ ի վեր ի Մասիս, անդ կացցես, եւ զլյս մի տեսցես։”

Հօր անէծքն ճշդութեամբ կատարւում է. մեր պատմագիրն ապա շարունակում է.

“Զրուցեն զսմանէ եւ պառաւոնք, եթէ արգելեալ կայ (Արտաւազդ) յայրի միում՝ կապեալ երկաթի շղթայիւք. եւ երկու շունք հանապազ կրծելով զշղթայսն, ջանայ ելանել եւ առնել վախճան աշխարհի, այլ ի ձայնէ կուանարկութեան դարբնաց զօրանան, ասեն, կապանքն։ Վասն որոյ եւ առ մերով իսկ ժամանակաւ՝ բազումք ի դարբնաց, զշետ երթալով տուասպելին, յաւուր միտաքաթւոջ երիցս կամ չորիցս բախեն զսալն, զի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազդայ”¹:

¹ Ա. Խորենացի, Գիրք Բ. գլ. ԿԱ. Հմմա. Եւս եղնիկ Կողբացի՝ «...» մե Արտաւազդ անուն արգելեալ իցե դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, եւ նա ելանելոց ե եւ ունելոց զավարհս ...» («Ընդդէմ աղանդոց», Ա. Խ.): Ուշադրութեան արժանի է, որ այստեղ Արտաւազդ ոչ թէ թագաւոր, այլ ըսկ ան է կոչում. ենթադրելու է, որ եղնիկ ի նկատի է ունեցել մեզ յայտնի աւանդութեան տարբեր հիւսւածք։

ՄՀերի եւ Արտաւազդի աւանդութեանց ամենաթեթեւ համեմատութիւնն անգամ վկայում է յօգուտ նոցա նմանութեան. եւ իրօք, երկու դիւցազն եւս

անզաւակ են,

բ. իրանց հայրերից անիծւած,

չ. գանգատում են իրանց վիճակի մասին հայրերի մահից յետ եւ պատասխան ստանում նոցա գերեզմանից,

դ. անհետանում որսորդութեան ժամանակ եւ

ե. փակւում այրի մէջ, որտեղ մնում են մինչեւ ցայսօր:

Ըստ Խորենացու՝ «վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ եւ դեւ փոխանակ եղին». ՄՀերի մեծ մայրը փակւում է նորան «Դ դռան յետեւը», որ խորտակում է մանուկ դիւցազնն եւ դուրս գալիս լրյու աշխարհ։

Անտարակցու մենք գործ ունենք այստեղ բարելական առասպելի հետ, որ հնումն ազգէ ազգ էր թափառում. ամառն անցնելուց յետ, երբ երկիս կանաչ զարդարանքն չըրանում մեռնում է (Արտաշէս, Դաւիթ), կենսատու արեւն (Արտաւազդ, ՄՀեր) թագնուում է մութ ամպերի թանձր շերտերի տակ, որպէս զի ժամանակը լրանալիս կրկին իւր երեսն ցոյց տայ: Հերոսի նոյն իսկ անունն ճշտում է այս ենթադրութիւնն. հին Պարսից լրսաբեր աստւածը Միթրա էր կոչւում, որ հաւանօրէն եւ հայ չաստուծոց տաճարն է մտել:

(Հմմտ. Աքեմենեան Արտաշէս Բ.ի արձանաւգրութիւնն Համադանում. Առւրամազդա, Անահիտա եւ Միթրա թողի ինձ փրկեն չարից...)

Որուսաց ժողովուրդն այս առասպելն հետեւեալ կերպով է աւանդում. Սվեատագորդիւցազնն, որին “Հողը այլ եւս չէ պահում”, Մհերի Նման, ճանապարհին պատահում է մի դագաղի: Մտնելով նորա մէջ, նա՝ չնայած իւր բոլոր ջանքին՝ այլ եւս չէ կարողանում այնտեղց դուրս գալ. նորա ուղեկից դիւցազն Խլեայի սրի ամէն մի հարածից դագաղի երկաթներն միայն կրկնապատկում են. այն ժամանակ Սվեատագորդ իննդրում է Խլեային թողնել նորան այնտեղ եւ փեշելով նորան է աւանդում իւր դիւցազնական ոյժն:

Միթրան առաջին անգամ յիշւում է վեժայում եւ Ավեստայում,¹ բայց ոչ իբրեւ արեւ, լուսին կամ մոլորակ, այլ իբրեւ լոյս, երկնից կամ բրահմանց վեժայից:

1 Վեդան (“գիտելքը”), Հնդկների ամենահին կրօնական յիշատականն է, ինչպէս հին Կտակարանը՝ Հրեից. բաղկացած է 4 մասերից՝ Ռիտ (երդ) — Սամա (շարական) — Եազուր (ազօթք) եւ Աթարվա — (կախարդական խօսք) կամ Բրահմանց վեժայից:

Ավեստան բան իրանական աշխարհայեցուղութեան գրաւոր ազբիւրն է, որ նմանապէս բաժանւած է 4 մասերի՝ ա. Եասնա (ազօթք) բ. Վիսաերեք (նոյնը) գ. Վենդիդադ (կրօնական եւ հաստակական կեանքին վերաբերեալ օրէնսդրութիւններ գ. Խորդա (փոքր) Ավեստա, որ պարունակում է իւր մէջ փառաբանական երգեր Միթրային, Անահիտին եւ այլ աստուծոց նւիրած: Ամբողջ Ավեստայից մեզ հասել է միայն մի հատւած, պահանջաներէն թարգմանութեամբ, մինչդեռ մեծ մասը կորսուած է Յունաց եւ Պարթեւաց տիրապետութեան ժամանակ:

Հետ անբաժան, որ մի կողմից վառունայ (օնքանօք), միւսից՝ Ահուրայ է կոչւում. “Հսկելով առանց քնի, նա պահպանում է Մազդայի արարածը դեւերի շարեաց դէմ”, (Ավեստայ, Ժեաշտ): Իբրեւ լուսատու զօրութիւն, Հետեւաբարնա պէտք է լիներ եւս ուրախութեան եւ լինդանութեան (յա) աղքիւր. Միթրան “տալիս է աճումն, տալիս է առանգութիւն, տալիս է խաշինք, տալիս է ժառանգութիւն եւ կեանք” (Նյոնտեղ:): Բայց նա ոչ միայն մարմնաւոր բարկինների, այլ եւ հոգեւոր յատկութեանց պարգեւատու էր. Թագաւորաց եւ պատերազմողների հոգանաւոր՝ նա իրան ընկերակից ուներ Վերեթրագնա (այլապէս՝ Արտագնէս, յաղթութիւն), մեր Վահագն աստւածը, իբրեւ Ճշմարտութեան պաշտպան՝ Սրառշային: Արամազդի եւ Ահրիմանի՝ բարի եւ չար դից մէջ նա ուներ իւր որոշ աստւածային տեղը. Թէպէտեւ արարած Արամազդի, սակայն նա սերտ միացած էր նորա Հետ այնպէս, ինչպէս լոյսը երկնակամարի Հետ: “Ես ստեղծեցի Միթրային, որպէս զի նորան այնչափ բարձր պաշտեն, այնչափ մեծարեն, ինչպէս Ահուրամազդայիս, ինձ ինքնիս ասում է իրանի ծայրագոյն աստւածը Զքաղաշ-աին (Միհիր եաշտ I):¹

Տարւայ 7^{րդ} ամիսը եւ ամէն մի ամսի 16^{րդ} օրը նւիրւած էր Միթրայի պաշտամունքի

¹ Franz Cumont, „Les Mystères de Mithra“ Paris, 1902. p. 8. Գիրքս նոր է լսու տեսած եւ պարունակում է իւր մէջ ճոխ եւ թարմ նիւթ Միթրայի պաշտամունքի պարմանեանն վերաբերեալ:

արարողութեանն. ըստ կտեսիասի՝ թագաւորն ինքն ի պատիւ նորա կատարում էր հեղման խորհուրդը եւ կաքաւում սրբազն պարեր։ Ամբողջ առաջաւոր Ասիայում մի ժամանակ իշխում էր Միթրականա կոչւած պաշտամունքն, որի ազդեցութիւնն նկատելի է նոյն իսկ հեթանոս Հայերի մէջ. Հայ օրացոյցի Մեհեննան անշուշտ “Միթրականի, աղաւաղումն է։

Միթրան բաւական ուշ է մտել արեւմտեան ազգերի դից տաճարը, իսկ հելլենական աշխարհին նա միշտ մնացել է օտար։ Ամենահին տեղեկութիւնը նորա մասին քաղում ենք Պլուտարքից, որ Հետեւեալն է աւանդում Սիկիլիական ծովային աւազակների մասին՝ «Նոքա Ողիմպոսի վերայ օտար զոհեր էին մատուցանում եւ գաղտնի արարողութիւններ կատարում, որոնցից Միթրայինը, որ առաջ ժամանակի նոքա ցցց տւած էին, մինչեւ այժմս պահպանւել է։”¹ Յամենայն դեպս միայն Ա. դարի վերջերում (Ն. Ք.) Միթրայի մասին առաջին անգամ խօսել սկսեցին Հռովմում, ապա զարմանալի արագութեամբ Պարսից աստուծոյ պաշտամունքն տարածւեցաւ հռովմէական լնդարձակ տէրութեան բոլոր մասերում։² Նորա հետքերը գտնւած են ոչ միայն Բաքելոնում, Սիդոնում, Կեսարիայում, Տրավիզոնում, այլ եւ Մեմֆիսում, Բալկանեան թերակղզում, Սիկիլիայում, Կարքեդոնում, ամբողջ Իտալիայում, Գերմանիայում, Սպա-

¹ Plutarchus: Vita Pompeji c. 24.

² Cumont, p. 31.

Նիստում, անգամ Անգղիայում։ Մեր ժողովը դական «Մհերի գուռը» (Վանայ քարը) իւր խորհրդաւոր անւան մէջ հաւանօրէն պահպանել է Խուլ յիշողութիւն իրանական լուսաբեր աստուծոյ մասին, որի տաճարը գուցէ Վանայ մօտերքն է պտրելու։

Ճփւելով զանազան ազգերի գից հետ, Միթրան բնականապէս պէտք է կորցնէր իւր սկզբնական դերը, որ նորան նւիրել էր հին պարսից կրօնը. Բաբելոնում նա ձուլեցաւ Շամաշի (արեւի) հետ եւ սոյն նշանակութիւնն պահպանեց միւս ազգերի համար։

Միթրային՝ նորա խորագիր քարարձան-ները սովորաբար ցուլասպան են ներկայացընում. աջ եւ ձախ կողմում կանգնած են երկու պատանիներ՝ կառուտէս եւ կառուտոպատէս՝ լապտերները ձեռներին. առաջինը իւր լապտերը վերեւ է բռնած, երկրորդը՝ գլխիվայր։ Այս երրորդութիւնն իսկապէս ձուլած է մի անձնաւորութեան մէջ. միեւնոյն արեւն է, որ առաւօտեան (գալնանը) բարձրանում է լեռների յետեւից, կէսօրին (ամառը) հասնում իւր գագաթնակէտին, իսկ երեկոյեան (ձմեռը) իջնում երկնակամարից մթութեան անդունդը։

Հետեւեալ աւանդութիւնն, որ մանրամասն նկարագրում է Միթրայի ծնունդը եւ հերոսագործութիւնները, կարող էր միայն պարզամիտ խաշնարածների մէջ հիւսւել, որոնց համար ցուլը հարկաւ սրբազան եւ թանկագին կենդանի պէտք է լինէր։

“Ծննդաժայուղ”, Միթրային աշխարհ
 է բերել մի գետի ափին, սրբազան ծառի
 ստուերի ներքոյ, եւ միայն հովիւները ներկայ են
 եղել այս հրաշքին.¹ մանկան գլուխը ծածկած
 էր փորիւգական գդակով, աջ ձեռքում նա
 արդէն բռնած ունէր դանակ, ձախում՝ լապտեր,
 որ կը լրսաւորէր խաւարը։ Հովիւները մա-
 տուցին նորան իրանց խաշինքի եւ հունձքի “առ-
 ջինեկները”։ Մանուկ դիւցազն մերկ էր եւ
 հողմերի սաստկութեանն ենթարկւած։ Նա
 պատսպարեցաւ թգենու ճիւղերի տակ, նորա
 պտուղներից կերակրուելով եւ նորա տերեւնե-
 րից իրան զգեստ շնելով։ Երբ երիտասար-
 դական հասակը մտաւ, կամեցաւ իւր ցժը
 փորձել երկրիս հզօրագոյն արարածների հետ։
 Նորա առաջին մարտը Արեւի հետ էր. սա,
 զգալով իւր հակառակորդի առաւելութիւնն,
 չոքեց առջեւը եւ Ճանաչեց նորա հովանաւորու-
 թիւն։ Միթրան հանեց նորա գլխից Ճաճանչա-
 փայլ Ճառագայթները եւ դրեց իւր գլխին։
 Այդ օրից երկու դիւցազունք երդուեցին յաւի-
 տեան միմեանց դաշնակից լինել։

Միթրայի երկրորդ հերոսագործութիւնը՝
 վայրի ցուլը զսպելն էր։ Պատահելով կատաղի
 կենդանուն, նա բռնում է նորա եղջիւներից
 եւ ցատկում նստում վերան. ցուլը փորձում է
 վայրի փախստեամբ գետին գլորել իւր բեռը,
 բայց շուտով զգում է իրան յաղթւած։
 Միթրան շալակում է նորան, բռնելով նորա

¹ Այլ արձաններում Միթրան խորէց է ծնում։

յետեւի ոտերից, եւ տանում իւր խրճիթը:
 Բայց ազատութեան սովոր կենդանին չէ կարող
 հաշտւել իւր գերութեան հետ եւ կրկին փորձ
 է անում փախչելու. այն ժամանակ Արեւը
 ագռաւի միջոցաւ հրաման է ուղարկում
 Միթրային՝ սպանել անհնազանդ կենդանին.
 Դիւցազնը հակառակ իւր կամաց կատարում է
 այս արիւնալի գործը:¹ Այստեղ տեղի ունեցաւ
 մի մեծ հրաշք. ցլի մարմնից երկրը կանաչով
 ծածկւեցաւ, նորա ուղեղից գոյացաւ սերմ եւ
 արիւնից՝ հաղողի թուփ. Նորա հոգին Միթրայի
 շան ուղեկցութեամբ վերացաւ երկինք, որտեղ
 իրրեւ խաշինք հովանաւորող զօրութիւն Սիլվան
 անւամբ աստւածացաւ: Այսպիսով ցլասպան
 դիւցազնը եղաւ ստեղծող բոլոր աշխարհային
 բարիկների, եւ այն մահւամբն, որ նա պատ-
 ճառեց, ծնեց նոր կեանք, աւելի հարուստ եւ
 բարգաւաճ:²

Բայց սորանով դեռ չեն վերջանում
 Միթրայի արկածները. Ահրիման, չարութեան
 աստւածը, նախանձելով, անապատ դարձրեց
 կանաչալարդ դաշտերը, ցամաքացրեց ջրերը.

¹ Ցլամարալ, որ ցայսօր պահպանել է հարաւային
 գեղղեցում եւ Սպանիայում, Միթրայի պաշտամունքի
 մացորդը պէտք է համարել:

² Museum für Alterthumskunde, Wiesbaden
 Nr. 239. Ամողջ աւանդութիւնն փորագրւած է քառան-
 կիւնի քարարձանի երկու երեսի վերայ, որի միջին մասը
 (ցուլ սպաննելը, ցուլ արգեն սպանւած) մի ժամանակ
 պացանելի էր եղել: Քարս պատկանում է Heddernheimում
 վերջերս գտնւած Միթրայի տաճարին:

սարսափած բնակիչք աղաչանօք դիմեցին իրանց հզօր պաշտպանին, եւ Միթրան նետով ծակեց ապառաժը, որտեղից յորդառատ ջուր սկսեց հոսել (Հմմտ. Մովսէս մարգարէն): Զքհեղեղից յետ, որից միայն մի մարդ ազատւեցաւ իւր տապանի մէջ, երկիրը հրոյ ճարակ դարձաւ, բայց մարդիկ այս անգամ եւս փրկւեցին կոռուստից աստուծոց օգնութեամբ:

Կատարելով իւր կոչումը երկրի վերայ՝ Միթրան նստաւ Արեւի քառալուծ կառքը եւ միւս դից հետ երկինք վերացաւ:¹

Աչաւասիկ հին Պարսից աւանդութիւնը Միթրայի մասին, որ արեւելեան ազգերի մէջ ցայսօր գեռ կենդանի է, թէպէտ եւ այլայլւած եւ քայլքայւած.² Եւ յիրաւի, մեր ժողովրդական Մհերը, որ մենամարտում է “Ասորին”, հետ նոյն Միթրան է, որ յաղթում է երկրիս ճառագայթակիր լուսաբերին:

Բայց հայ աւանդութեան վերայ գրոշմել է բաբելոնական մի այլ առասպելի հետք եւս. աստեղամարտիկ Մհերը մեզ մօտ յիշեցնում է բարելական վէպի դիւցազն իզդուբարին (Կերպովդին): Երբ Ելամացիք նւաճում են Երեխ քաղաքը, իզդուբար կիսաստւած էա—բանիի օգնութեամբ սպանում է թշնամեաց խումբաբայ թագաւորին եւ փրկում քաղաքն: Հերոսի վերայ սիրահարւում է Իշտար դիցուհին,³ բայց

¹ Cumont pp. 109—116.

² Ցես իմ “Իրանի հերոսները” հայ ժողովրդի մէջ՝,

³ Իշտար բարելական դիցուհի է, որ համապատասխան է ասր. Դին. Վեզ.

Հերոսն, որպէս զի չենթարկւի իւր նախորդների՝ իշտարի աիրականների՝ տխուր վիճակին, մերժում է նորա սէրն։ Անպատւած դիցուհին խընդրում է այն ժամանակ իւր հայր Անուին ստեղծել մի «երկնից աստղ», որ պէտք է ոչնչացընել իզդուբարին. բայց դիցազնն այս անդամ եւս յաղթող է հանդիսանում իւր հաւատարիմ ընկերոջ օգնութեամբ։

Այստեղից սկսում է մի մեծ պակասորդ։ Իզդուբարին ապա մենք գտնում ենք հիւանդ, իսկ էա-բանին՝ մեռած։ իւր ընկերոջն կենդանացընելու, իսկ իրան առողջացընելու համար՝ նա ստիպւած է որոնել իւր պապ Պիր-Նապիշտին, որին մահն երբեք չէ վստահանում մերձենալ։ Երկար թափառելուց յետոյ նա վերջապէս հասնում է Պիրի բնակրանն եւ նորա միջոցաւ առողջանում։ Ծերունին պատմում է ջրհեղիղի զրոյցն, նաև շինելն եւ իւր փրկւելն ընդհանուր կորստից։ Ապա առողջացած դիցազնն վերագառնում է երեխ եւ ստանում իւր ընկեր էաբանին։¹

Պարսից, Հայոց եւ Բաբելացոց աստեղային աւանդութեանց փօխադարձ կապը անկասկած է։ Իրաւամբ ենթադրելով, որ իրանց աստեղագիտութեամբ հաշակւած Սումեր եւ

տասիան է Venus մոլորակին. Իցէ այս անունից է ծագել հետեւրոպական «աստղ», — ձուրիզ, յալս, stella բառն։
1 Ամբողջ վեպը բաղկացած է 12 տախասկներից եւ պատկանում է Ասուրբանիպաղի (668—626) գրադարանին. գտնուած է 1854 թ. Կինսուլում։

Ակկադ ազգերի մէջ է պտղելու երկնային լուսատուների պաշտամունքի նախահայրենիքն, սակայն խոստովանելու ենք, որ ոչ մի աղբիւր, դրաւոր կամ բանաւոր, տակաւին չէ պարզած Բաբելոնի եւ Հնդ-Եւրոպական ազգերի մությարարերութիւնները:

Ահաւասիկ Մհերի աւանդութեանց Հնագցն աղբիւրներն: Անտարակոյս, ժամանակի ընթացքում նորա քայլայւել են եւ մեզ հասել միայն չնչին քանակութեամբ, այն եւս բաւական աղաւաղւած: Նոցա կապն դաւթի վիպական զրոյցների հետ միանգամայն արւեստական է եւ տեղի է ունեցել վերսիշեալ աստեղային առասպելի ազգեցութեան ներքոյ, որ դեռ հնումն կ'երգէին երգիչք Գողթան գաւառի: Երկու ազգային Հերոսներն բնաւ տարրեր են միմեանցից իրանց բարոյական նշանակութեամբ. Մհեր պատկանում է առասպելի, Դաւիթ՝ պատմութեանն. Մհեր մենամարտում է երկնային աստեղը հետ, Դաւիթ՝ Հայրենեաց թշնամիների հետ. Մհեր իւր անմահութեամբ մտնում է դից շարքը, իսկ Դաւթի համբաւն կազմում է իւր ազգի փառքն:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յառաջաբան	62
Ա. «Հայ աստղները»	1
Բ. Դիւցազնական աւանդութեանց արուեստական կողմը	4
Գ. Տեղական մշակման ազդեցութիւնը	6
Դ. Տողովագնական դիւցազնական վէպի բովան- դակութիւնը (Սանասար եւ Ապի մելիք Բաղ- դասար)	10
Մեծ Մակը	11
Փոքր Մակը	13
Հայ դիւցազնական վէպի պատմական սերմն . .	26
Դաւթի աւանդութեանց ծագումը. հերոսի բուն հայ- ունիքն, անծնաւորութիւնն եւ անունն. Նորա բարոյական տիպարը	31
Մակը առասպելն	38
	56

ԱԶԳԻ ԱՅԻ ԹԱՑԵՆԱԴՐԱՆ

- Ա. Գալէմքեարեան Հ. Գրիգորիս Վ., Ուսումնասիրութիւնը Լեհանայոց զատաստանագրուն:
1. Պիշոֆ, Լեհանայոց հին իրաւունքը: 2. Գոյկը, իրաւունք Հայոց: 1890: 8^o Երես՝ 85+59: Ֆր. 1.25
- Բ. ՄԵՃԵՎԻշեան Հ. Գարդիկը, Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիրականց. (պատկերազարդ:) 1890: 8^o Երես՝ 50: Ֆր. 1.—
- Գ. Տաշեան Հ. Յակովրոս, Ազաթանգեղոս առ Գէրզայ ասորի եպիսկոպոսին եւ ուսումնամիրութիւն Ազաթանգեղեայ գրոց: 1891: 8^o Երես՝ ԺԱ+59: Ֆր. 1.25
- Դ. Դեմետրիոս Տաճի Արեւելեան Հայք ի Պուրովինա: Թրգմ. Հ. Գ. Վ. Գալէմքեարեան: 1891: 8^o Երես՝ 79: Ֆր. —.85
- Ե. Տաշեան Հ. Յակովրոս Վ., Ուսումնամիրութիւնը Ստոյն-Կալխտենեայ Վարուց Աղեքսանդրի: 1892: 8^o Երես՝ Դ+272: Ֆր. 3.—
- Զ. Աշպէր Ցըլիկ եւ Գ. Փիսոն, Ուղեւորութիւնից կէպ ի Հայս: Թրգմ. Ասիա: Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1892: 8^o Երես՝ 82: Ֆր. 1.—
- Է. Մատ Նիկ., Ամառնային ուղեւորութիւնից գէպ ի Հայս: Թրգմ. Մովքիոս Անդեան: 1892: 8^o Երես՝ 89: Ֆր. 1.25
- Ը. Գարիկը Ա., Նորագոյն աղքեքք Մովսիսի Խորենացւույ: Հտ. Ա.: Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1893: 8^o Երես՝ Ժ+51: Ֆր. 1
- Թ. Գալէմքեարեան Հ. Գրիգորիս Վ., Պատմիթիւն Հայ լրագրութեան: Հտր. Ա. 1794—1860: (1 լրսանկարով:) 1893: 8^o Երես՝ 232: Ֆր. 2.50

- Ժ. Կոմիքիր Փր. Կ., Թնտութիւնք գրոց Դաւթի
Անաղթի: Թրգմ. եւ յաւ. Հ. Յ. Վ. Ճաշան:
1893: 8^o Երես՝ է+92: Ֆր. 1.25
- ԺԱ. Գովրիկեան Հ. Գրիգոր Վ., Հայք յնդիսա-
բթուպոլիս Դրանսիլուանիոյ 1680—1779: (1 զըն-
կատիա.) 1893: 8^o Երես՝ Ժ+533: Ֆր. 4.50
- ԺԲ. Խաչաթեան Գր., Զենոդ Գևակ, համեմատական
ուսումնասիրութիւն: 1893: 8^o Երես՝ 78: Ֆր. 1.—
- ԺԳ. Տէր-Մովսիսեան Փարսադա, Հայ գիւղա-
կան տունը: Թրգմ. Հ. Բ. Վ. Պիլէքիկծնան: (6
տախտակ՝ 55 պատկ.): 1894: 8^o Երես՝ 103: Ֆր. 2.—
- ԺԴ. Գարիկը Ա., Նորագոյն աղբեռք Մովսիսի Խորե-
նացւոյ. Հար. Բ. Կամ Յաւելուած: Թրգմ. Հ. Յ.
Վ. Ճաշան: 1894: 8^o Երես՝ ԺԱ+43: Ֆր. 1.—
- ԺԵ. Տաշեան Հ. Յ. Վ. Վ., Ուսումնասիրութիւնք հայերէն
փոխառեալ բառից: Ա.՝ Հ. Հիւազման, Սեմական
փոխառեալ բառեր հին հայերէնի մէջ: Բ.՝ Փրոբէլ-
ման Կ., Յունական փոխառեալ բառեր հայերէնի
մէջ: Գ.՝ Հ. Հիւազման, Հայկական Յատուկ անուանք:
1894: 8^o Երես՝ 9+145: Ֆր. 2.—
- ԺԶ. Տաշեան Հ. Յ. Վակովքոս Վ., Մատենագրական
մանր ուսումնասիրութիւնք: Հար. Ա.: Ա—Զ: Ա. Նե-
մեսիսոս: Բ. Պրոկոլ Դիաղոնոս: Գ. Խոսրովիկ: Դ.
Գիրք Հերձուածոց Կամ Նպիքան: Ե. Պրոկոլ: Զ.
Սեկոնդոս իմաստաէր: 1895: 8^o Երես՝ ԺԲ+294:
Ֆր. 3.60
- ԺԷ. Տաշեան Հ. Յ. Վակովքոս Վ., Հայկական աշխատ-
սիրութիւնք հայագէտ Պ. Փէթթէրի, ի մի ամփո-
փուած եւ թարգմանուած հանդերձ ծանօթու-
թեամբք: 1895: 8^o Երես՝ 202: Ֆր. 2.50
- ԺԸ. Տիւրեան Կ., Սեւ Ծովու ուսական եզնքքը:
1895: 8^o Երես՝ 192: Ֆր. 2.—
- ԺԹ. Գովրիկեան Հ. Գրիգոր Վ., Դրանսիլուանիոյ
Հայոց Մետրապոլիսը Կամ Նկարագիր Կերպա
Հայացադաք ի գիր եւ ի պատկերս: 1896: 8
Երես՝ Թ+352: Ֆր. 3.60
- Ի. Տաշեան Հ. Յ. Վակովքոս Վ., “Վարդապետու-
թիւն առաքելոց, անվաւերական կանոնաց մա-
տեանց. Թուղթ Յակոբայ առ Կողբատոս եւ Կանոնց
Թաղդէի: 1896: 8^o Երես՝ Թ+442: Ֆր. 6.—

- հԱ. Տոմաշեկ Վ., Սասուն եւ Տիգրիսի աղբերաց
սահմանները: Պատմական եւ տեղագրական հա-
տազոտութիւն: Մասն Առաջին՝ Պատմական տե-
ղեկութիւնը Սասոյ վրայ: Թրգմ. Հ. Բ. Պիլէզիկ-
մեան: 1896: 8, Երես՝ Է+62: Փր. 1.—
- հԲ. Կարերիկ Ա., Աքարու զրոյցը Մովսէս Խորե-
նացոյ Պատմութեան մէջ: Թրգմ. Հ. Գաբրիէլ Վ.
Մէնէվիշեան: 1897. 8^o էջ Ծ.Ձ+107: Փր. 1.50
- հԳ. Յովան Անեան Հ. Ղ., Հետազոտութիւնը նախ-
նեաց ուսկօրէիմ վրայ: Ուսումնասիրութիւնը եւ
քաղուածները: Մասն Ա. Ռամզօրէն մատենագրու-
թիւնը: Տետր Ա: 1897, 8^o էջ Ը+272: Փր. 4.—
- հԴ. Յովան Անեան Հ. Ղ., Հետազոտութիւնը նախնեաց
ուսկօրէիմ եւն: Տետր Բ: 1897: 8 էջ Ա-Ը+
273-522: Փր. 3.—
- հԵ. Գեղց էր Հ., Համառուպատմութիւն Հայոց: Թրգմ
Հ. Գր. Վ. Գալէմբարեան: Յաւելուածք թարգ-
մանչին՝ 1. Յանկ 1895—1897 Հայոց կոտրած-
ներու առթիւ լրյու տեսած զրերու: 2. Գաւազա-
նագիրը Կաթողիկոսաց եւ Պատրիարքաց Հայոց:
1897 8^o էջ Ը+130: Փր. 1.50
- հԶ. Մեճեվիշեան Հ. Գարերիկ Վ., Գիրք (կամ
յօդուածք) զրելու արուեստը: Նորուս հեղինակնե-
ռուն ուղղեալ քանի մը կարեւոր ակնարկութիւն-
ները: Յաւելուածք Գիրք կարդալու արուեստը:
1898: 8 էջ Է+123: Փր. 1.25
- հԵ. Խաչար և ամ Գր., Մ. Խորենացու նորագոյն
աղբիւրների մասին քննադատական ուսումնա-
սիրութիւնը: 1898: 8^o, 56 էջ: Փր. 1.—
- հԸ. Տաշեան Հ. Յ., Ալիսարկ մը հայ հնագրու-
թեան վրայ: Ուսումնասիրութիւն Հայոց գրչու-
թեան արուեստին: (10 զնկատիպ պատկերով):
1898: 8^o Ծ.Ա+202 էջ: Փր. 2.50
- հԹ. Դադաշեան Յ., Փաւստու Բիւզանդացի եւ
իր պատմութեան խարդախողը: Մ. Խորենացու
աղբիւրների ուսումնասիրութիւն: 1898, 8^o 175 էջ:
Փր. 2.50
- Լ. Մաներեանց Լ., Հայերէն բարբառախօսութիւն:
Թրգմ. ի ուսուերէնէ Հ. Գ. Վ. Մէնէվիշեան: 1899,
8^o Երես՝ Է+26: Փր. —.50

Ժ. Կոմիրին Փր. Կ., Քննութիւնք գրոց Դաւթի
Ալյաղթի: Թրգմ. եւ յաւ. Հ. Յ. Վ. Ճաշեան:
1893: 8° Երես՝ Է+92: Ֆր. 1.25

ԺԱ. Գովրիկեան Հ. Գրիգոր Վ., Հայք յԵղիսա-
բեթուաղիս Դրանսիլուանիոյ 1680—1779: (1 զըն-
կատիպ.) 1893: 8° Երես՝ Ծ+533: Ֆր. 4.50

ԺԲ. Խաչաթեան Գր., Զենոդ Գլակ, Տամմւատական
ուսումնափրութիւն: 1893: 8° Երես՝ 78: Ֆր. 1.—
ԺԳ. Տէր-Մովսիսեան Փարսադան, Հայ գիրա-
կան տունը: Թրգմ. Հ. Բ. Վ. Պիլէգիկմեան: (Ե
տախտակ՝ 55 պատկ.): 1894: 8° Երես՝ 103: Ֆր. 2.—:

ԺԴ. Գարիկեր Ա., Նորագոյն աղբեռք Մովսիսի Տորե-
նացոյ. Հոր. Բ. Կամ Յաւելուած: Թրգմ. Հ. Յ.
Վ. Ճաշեան: 1894: 8° Երես՝ ԺԱ+43: Ֆր. 1.—
ԺԵ. Տաշեան Հ. Յ. Վ. Վ., Ուսումնափրութիւնք հայերէն
փոխառեալ բառից: Ա.՝ Հ. Հիւացման, Սեմական
փոխառեալ բառեր ին հայերէնի մէջ: Բ.՝ Փրոբէլ-
ման Կ., Յունական փոխառեալ բառեր հայերէնի
մէջ: Գ.՝ Հ. Հիւացման, Հայկական Յատուկ անուանք:
1894: 8° Երես՝ 9+145: Ֆր. 2.—

ԺԶ. Տաշեան Հ. Յակովը ու Վ., Մատենագրական
մանր ուսումնափրութիւնք: Հոր. Ա.: Ա—Զ: Ա. Նե-
մեսիոս: Բ. Պրոլլ Դիալոյնու: Գ. Խոսրովիկ: Դ.
Գիրք Հերձուածոց Կամ Նպական: Ե. Պրոլլ: Զ.
Նեկունդու իմաստասէր: 1895: 8° Երես՝ ԺԲ+294:
Ֆր. 3.60

ԺԷ. Տաշեան Հ. Յակովը ու Վ., Հայկական աշխատ-
սիրութիւնք հայագէտ Պ. Ֆէթթէրի, ի մի ամփո-
փուած եւ Թարգմանուած հանդերձ ծանօթու-
թեամբ: 1895: 8° Երես՝ 202: Ֆր. 2.50

ԺԸ. Տիարեան Կ., Սեւ ժողովու ուսական եղեցքը:
1895: 8° Երես՝ 192: Ֆր. 2.—

ԺԹ. Գովրիկեան Հ. Գրիգոր Վ., Դրանսիլուանիոյ
Հայոց Մետրապոլիսը Կամ Նկարագիր Կերպա
Հայաքաղաքի ի գիր եւ ի պատկեր: 1896: 8
Երես՝ Թ+352: Ֆր. 3.60

Ի. Տաշեան Հ. Յակովը ու Վ., “Վարդապետու-
թիւն առաքելոց անվաներական կանոնաց մա-
տեանը. Թուղթ Յակորայ առ Կողբատու եւ Կանոնը
Թաղէի: 1896: 8° Երես՝ Թ+442: Ֆր. 6.—

- հԱ. Տոմաշեկ Վ., Սասուն եւ Տիգրիսի աղբերաց
սահմանները: Պատմական եւ տեղագրական հե-
տազօտութիւն: Մասն Առաջին՝ Պատմական տե-
ղեկութիւնը Սասուն վրայ: Թրգմ. Հ. Բ. Պիլէզիկ-
ծան: 1896: 8° Երես՝ Է+62: Փր. 1.—
- հԲ. Գարդիկը Ա., Ազգարու գրոյցը Մովսէս Խորե-
նացոյ Պատմութեան մէջ: Թրգմ. Հ. Գարդիկ Վ.
Մէնէվիշեան: 1897. 8° Էջ Ժ.Զ+107: Փր. 1.50
- հԳ. Յովանանեան Հ. Դ., Հետազօտութիւնք Նախ-
նեաց ուամկօրչնի վրայ: Ուսումնասիրութիւնք եւ
քաղուածներ: Մասն Ա. Խամկօրէն մատենագրու-
թիւնք: Տետր Ա: 1897, 8° Էջ Ը+272: Փր. 4.—
- հԴ. Յովանանեան Հ. Դ., Հետազօտութիւնք Նախնեաց
ուամկօրչնի եւն: Տետր Բ: 1897: 8° Էջ Ա-Ը+
273-522: Փր. 3.—
- հԵ. Գեղցէր Հ., Համառու պատմութիւն Հայոց: Թրգմ
Հ. Գր. Վ. Գալէմբարեան: Յաւելուածք Թարգ-
մանչին՝ 1. 8անկ 1895—1897 Հայոց կոտորած-
ներու առթիւ լոյս տեսած գրքերու: 2. Գաւազա-
նագիրք Կաթողիկոսաց եւ Պատրիարքաց Հայոց:
1897 8° Էջ Ը+130: Փր. 1.50
- հԶ. Մէճէվիշեան Հ. Գարդիկ Վ., Գիռք (Ղամ
յօդուած) գրելու արուեստը: Նորուս հեղինակնե-
ռուն ուղիւալ քանի մը կարեւոր ակնարկութիւն-
ներ: Յաւելուածք Գիռք կարդալու արուեստը:
1898: 8° Էջ Է+123: Փր. 1.25
- հԵ. Խաչաթեան Գ. Ի., Մ. Խորենացու նորագոյն
աղբերների մասին մնադատական ուսումնա-
սիրութիւնք: 1898: 8°, 56 Էջ: Փր. 1.—
- հԶ. Յաշեան Հ. Յ., Ակնարկ մը հայ նսագու-
թեան վրայ: Ուսումնասիրութիւն Հայոց գրչու-
թեան արուեստին: (10 զնկատիպ պատկերով):
1898: 8° Ժ.Ա+202 Էջ: Փր. 2.50
- հԹ. Դադաշեան Յ., Փաւստու Բիւզանդացի եւ
իւր պատմութեան խարդախողը: Մ. Խորենացու
աղբերների ուսումնասիրութիւն: 1898, 8° 175 Էջ:
Փր. 2.50
- Լ. Մաերեանց Լ., Հայերէն բարբառախօսութիւն:
Թրգմ. ի ուսւերէնէ Հ. Գ. Վ. Մէնէվիշեան: 1899,
8° Երես՝ Է+26: Փր. —.50

- ՀԱ. Քոսկամ Հ. Յ., Հայր ի Զմիւռնիա եւ ի շրջակայս: Հատող Ա. Զմիւռնիա եւ Հայր. (պատկերագրութեալ) 1899: 8^o նրեն՝ ԺԲ+369: Փր. 5.—
- ԼԲ. Քոսկամ Հ. Յ., Հայր ի Զմիւռնիա եւ ի շրջակայս: Հատող Բ. Զմիւռնիոյ վիճակին զինաւոր քաղաքներն եւ Հայր. (պատկերագրութեալ) 1899: 8^o նրեն՝ Ժ+161: Փր. 2.50
- ԼԳ. Գովորիկնեամ Հ. Գրիգոր Վ., Հայր յԵղիսաբեթուալի Դրանսիւանիոյ. Բ. Հատող 1780—1825. (1 զնկատիպ:) 1899: 8^o նրեն՝ Է+558: Փր. 5.—
- ԼԴ. Գագամձեամ Յ., Եւզորկիոյ Հայոց գաւառաբարբառոց: 1899: 8^o նրեն՝ Է+124: Փր. 1.—
- ԼԵ. Կարիէր Ա., Հեթանոս Հայաստանի ութ մեհեաններն Ազաթանգեղոսի եւ Մ. Խորենացւոյ համեմատ: Թրգմ. Հ. Ցակովընո Վ. Տաշխան: (1 աշխարհագրկութեալ) 1899: 8^o նրեն՝ 48: Փր. —.70
- ԼԶ. Տաշխան Հ. Յ., Ժողովածոյք առակաց Վարդանայ, ըստ Ն. Մանի, տեղեկատութիւն եւ քաղուածքներ: 1900: 8^o նրեն՝ ԺԱ+198: Փր. 2.50
- ԼԷ. Տաշխան Հ. Յ. Մատենագրական Մանի Ուսումնահրութիւնը. (տես ԺԳ:) Ման Բ: Է-թ. Խոկար եւ իւր իմաստութիւնն, Ազաթետոս եւ իւր Յորդորականը առ Յոստինիանոս, Թղթակցութիւն Ազգարու եւ Քրիստոսի ըստ Նորագիւտ արձանագրութեան Եփեսոսի, եւ Գորգայ Պիսիդեայ Վեցօրեայ: 1901: 8^o նրեն՝ ԺԲ+388: Փր. 4.50
- ԼԸ. Գր. Տէր-Պողոս Ետան, Ակատողութիւններ Փաւստոսի Պատմութեան վերաբերեալ: 1901: 8^o նրեն՝ Հ+110: Փր. 1.50
- ԼԹ. Վերէր Դր. Սիմոն, Արարատը Ս. Գրոց Մէջ: Թրգմ. Հ. Բառնաբաս Վ. Պիէզիկէնան: 1901: 8^o նրեն՝ Ծ+77: Փր. 1.—
- Խ. Մանաւալձեամ Յովսէկի Վ., Ասորեստանեայ եւ Պարսիկ սեպագիր արձանագրութիւնը կամ նոցին քաղուածք որոնց Նախրի-Ուրարտու աշխարհին պատմութեան կը վերաբերին: 1901: 8^o նրեն՝ Զ62: Փր. 4.50
- ԽԱ. Խաչաթեամաց Բագրատ, Հայ ժողովրդական դիցանական վէպը: 1903: 8^o նրեն՝ Ը+72: Փր. 1.—

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳՐԱՆՑ

1. Տասնիներորդ դարի կտակը (1899) Տփղիս	15 կոպ.
2. Թըլօր Դաւիթ Եւ. ՄՇեր (1899) Եջմանքին	40 "
3. Օբյայ ուշական արքայական գույքի համար առաջնահատ աշխատանք (1900)	—
4. Օբյայ ուշական արքայական գույքի համար առաջնահատ աշխատանք (1900)	—
5. Տասնիներորդ դարի կտակը (1899) Տփղիս	15 կոպ.
6. Die armenische Helden sage. Berlin 1902	50 "
7. Մի կարծիք Հայ նախարարութեանց ծագման մասին. Պարիս 1902	50 "
8. Die neuere armenische Litteratur. Berlin	—
9. Ueber den Ursprung der armenischen Fürstenthümer	50 "

ՀԱՅՈՎՈՎ ԼՐՍ ԿԵ ՄԵԱՆԻ ՊԱՏԱԺՈՒԹԻՒՆ ՈՒՐԱՐՄՈՎ
ՄԵՐՈՎԹԵԱՆ :

ՑԱՅԱՋՈՂԵՐԸ ԳԻՄԵԼԸ ԷՆ

Dr. Bagrat Chalatianz

Berlin (Deutschland), Charlottenburg
Kantstrasse Nr. 94.

UNIVERSITY OF MICHIGAN



3 9015 06023 5895

UNIVERSITY OF MICHIGAN




3 9015 06023 5895



scan + print wifly

**Barcode
Inside**





Scan & print w/ bigy

